Ազգ
Azg
armenian daily
24 ՄԱՐՏ 1995 ՈՒՐԲԱԹ # 54 (1108)

Լարվածությունն ավելանում է նաեւ հայ-նախիջեւանյան սահմանում

Ադրբեջանական կազմավորումները կրկին խախտել են անդորրը հայ-ադրբեջանական սահմանի ինչպես հյուսիս-արեւելյան, այնպես էլ հարավ-արեւմտյան հատվածներում: Պաշտպանության նախարարության հաղորդած տեղեկությունների համաձայն, մարտի 22-ին ադրբեջանական ուժերը մոտ 15 րոպե շարունակ հետեւակի մարտական մեքենայից գնդակոծել են Եղեգնաձորի շրջանի Արենի գյուղի հայկական պաշտպանական դիրքերը: Միաժամանակ, Նախիջեւանի Օրդուբադի շրջանի տարածքից հետեւակի մարտական մեքենայից եւ խոշոր տրամաչափի գնդացիրներից գնդակոծվել են Մեղրու շրջանի Ծիրանիձորի հայկական դիրքերը: Երկու դեպքում էլ տուժածներ եւ ավերածություններ չկան: Հայկական ուժերը պատասխան գործողությունների չեն դիմել:

Նույն աղբյուրների համաձայն, ադրբեջանական ուժերը զենիթային կայանքներով եւ խոշոր տրամաչափի գնդացիրներով հրետակոծել եւ գնդակոծել են նաեւ Տավուշի շրջանի Չինարի եւ Կրասնոսելսկի շրջանի Վահան գյուղերի հայկական պաշտպանական բնագծերը: Տավուշի շրջանում թեթեւ վիրավորվել է 1 զինծառայող: Այս անգամ թշնամին կրակը դադարեցրել է միայն հայկական սահմանապահ ուժերի պատասխան համարժեք գործողություններից հետո: Երեկ իրավիճակը սահմաններում համեմատաբար հանգիստ է եղել: ■

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ

Գարեգին արք. Ներսիսյան. Երկփեղկումը լուծում կստանա Ազգային-եկեղեցական ժողովում

«Նոյյան տապան» գործակալության թղթակից Հեղինե Մկրտչյանի հարցերին պատասխանում է Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանը:

– Արդյոք Գարեգին Բ վեհափառի ընտրությունը Էջմիածին-Անթիլիաս երկփեղկվածության վերացման լավագո՞ւյն տարբերակը կլինի:

– Խնդիրը կուզեի պատկերել որպես տարածայնություն ավագ եւ կրտսեր եղբայրների միջեւ: Այսօր ներկայացել է առիթ եւ պահ լուծելու այդ տարածայնությունները: Այս առնչությամբ զանազան հարցեր են բարձրանում, որոնք իրենց լուծումներն ու վերլուծություններն են պահանջում: Եթե այդ խնդիրը լուծվելու է ի հաշիվ եկեղեցու հեղինակության նվազեցման եւ մի նոր պառակտումի, հայ ժողովրդի ոչ մի զավակ ցանկալի չի նկատի եւ կնախընտրի պահպանել գոյություն ունեցող իրավիճակը: Եթե այդ միությունը պետք է նպաստի ընտանիքի հեղինակության բարձրացմանը, սիրո եւ միության զորացմանը, չեմ կարծում՝ որեւէ հայորդի առարկություն ունենա: Այս բոլոր հարցերը իրենց վերջնական լուծումը կստանան Ազգային եկեղեցական ժողովում: Ես հավատում եմ, որ իրապես Աստծո եւ ազգի կամքի ուղիղ եւ շիտակ դրսեւորումը պետք է լինի Հայոց Հայրապետի ընտրությունը:

Տես # էջ 2

Կաթողիկոս Գարեգին Բ-ն հարցման ժամանակ գրավել է 2-րդ տեղը

«Նոյյան տապան» գործակալության մարտի 21-ի թողարկած «Հայ Առաքելական եկեղեցու յոթ թեմերի տարածքներում անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքներով ձայների [illegible] բաժինը ստացել է Գարեգին արք. Ներսիսյանը» լրատվության մեջ տեխնիկական պատճառներով թույլ է տրվել վրիպում: Ներկայացնում ենք լրատվության ճշգրիտ տարբերակը: Փետրվարի 25-ից մարտի 10-ը ՀՀ հեռուստատեսության եւ ռադիոյի հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի անցկացրած հարցումը նվիրված էր կաթողիկոսական ընտրություններին: Հասարակական կարծիքի ուսումնասիրման շրջանակներն ընդգրկել են Հայ առաքելական եկեղեցու յոթ՝ Արարատյան հայրապետական, Շիրակի, Գուգարքի եւ Սյունիքի թեմերի տարածքները: Հարցմանը մասնակցել է 2100 մարդ: Հետազոտության արդյունքների համաձայն, Ամենայն հայոց կաթողիկոսական գահի թեկնածուները, ըստ հարցման մասնակիցների կողմից ստացված ձայների, ներկայացնում են հետեւյալ հերթականությունը (ըստ նվազման կարգի). Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյան՝ 21,1 տոկոս, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ՝ 20,2 տոկոս: Շարունակությունը՝ նույնությամբ:

ԼՏ

Հոլանդացի դիվանագետը ՀՌԱԿ գրասենյակում

Հինգշաբթի, մարտի 23-ին, ՀՌԱԿ Հանրապետական վարչության գրասենյակ այցելեց Մոսկվայում Հոլանդիայի դեսպանության քաղաքական խորհրդական Ջոն Կոերսը: Հոլանդացի դիվանագետը ավելի քան մեկ ժամ տեւող զրույց ունեցավ ՀՌԱԿ Հանրապետական վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանի հետ: Կոերսը ծանոթացավ Հայաստանի ներքաղաքական իրավիճակի, քաղաքատնտեսական բարեփոխումների ընթացքի, առաջիկա խորհրդարանական ընտրությունների, ինչպես նաեւ Հայաստանի արտաքին քաղաքականության նկատմամբ ՀՌԱԿ-ի դիրքորոշումներին: ■

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Ընտրությունները կանցկացվեն հին օրենքով

Նախագահի եղույթը չազդեց խորհրդարանի վրա

[illegible] ԱՍԱՏՐՅԱՆ

Հայաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նիստը երեկ այդպես էլ չկարողացավ որեւէ սահմանադրական օրենք ընդունել: Երկարատեւ, հաճախ նույնիսկ առանց ընդմիջման անցկացված քննարկումները ոչ մի փոփոխության չհասցրին ոչ ընդդիմության, ոչ ՀՀՇ-ի եւ նրան հարողների, եւ ո՛չ էլ 70 պատգամավորների խմբի նախկին դիրքորոշումներում: Ինչպես կանխատեսել էինք, վերջին պահին օգնության հասավ հանրապետության նախագահը, որի ելույթի հիմնական նպատակն էր ազդել քվեարկության արդյունքների վրա: Ու թեեւ Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, թե ինքը կտրականապես դեմ է ոչ պրոֆեսիոնալ խորհրդարանին, բայց նաեւ նշեց, թե չեն կարող հաշվի չառնել 70 պատգամավորների գործոնը, առանց որի անհնար է ձայների առկայության նման պայմաններում որեւէ արդյունք ակնկալել:

Այնուհետեւ, նախագահը նշեց, որ ապագա խորհրդարանը պետք է լինի անցման շրջանի: «Պրոֆեսիոնալ խորհրդարանը պետք է դիտել իբրեւ մարտավարական խնդիր, իսկ Սահմանադրությունը ռազմավարական», ասաց նա: Նախագահին ըստ էության հարեց Եզրայանի համաձայնողի երկրորդ տարբերակին (190 պատգամավոր եւ ոչ պրոֆեսիոնալ), որն էլ, ի դեպ, նախագծերի քվեարկության արդյունքում հավաքեց ամենաշատ ձայները. 148 կողմ, 35 դեմ եւ 14 ձեռնպահ: Բայց չանցավ, քանի որ օրենքի ընդունման համար պահանջվում էր ձայների երկու երրորդը՝ 163:

Նախագահ Տեր-Պետրոսյանը մի կանխատեսում էլ արեց, նշելով որ հակառակ դեպքում կմնա հին օրենքը, որը նշանակում է, «թե մենք խորհրդարան չենք ունենա»:

Քաղաքական այս մեծ խաղի բացասական արդյունքը հնարավոր կլինի տեսնել, երբ ԳԽ-ն կրկին անդրադառնա այս հարցին: Առայժմ արտահերթ նիստը որոշեց կիսատ մնացած հարցերը շարունակել հաջորդ նստաշրջանում: ■

ՎԱՇԻՆԳՏՈՆ

Թուրք-հունական պատերա՞զմ

ԵՐԵՎԱՆ, 23 ՄԱՐՏ, ՍՆԱՐՔ: Մարտի կեսերին ԱՄՆ-ի Պետդեպարտամենտի եվրոպական գործերի քարտուղար Ռիչարդ Հոլբրուկը հուշագիր է հրապարակել Բալկաններում Հունաստանի եւ Թուրքիայի միջեւ մոտալուտ հավանական պատերազմի մասին: Ներկայացնելով այս տեղեկությունը «Վաշինգտոն փոստ» թերթը վկայակոչում է գերմանական DPA լրատվական գործակալությանը:

Որոշ դիտորդներ քրդերի դեմ Թուրքիայի ներկայիս ագրեսիան Հյուսիսային Իրաքում համարում են արեւմտյան ճակատում լարվածությունը թուլացնելու եւ այն արեւելյան ճակատ փոխադրելու մի փորձ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գեներալ Գրաչովը գոհ է այցի արդյունքներից, իսկ լրագրողները՝ թիկնապահներից

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ

Չորեքշաբթի կեսօրին ավարտվեց Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար, բանակի գեներալ Պավել Գրաչովի այցը Հայաստան: Ցերեկը նա պետք է մասնակցեր Ռուսաստանի անվտանգության խորհրդի նիստին, որում պիտի հանդես գար Մեծ հայրենական պատերազմում տարած հաղթանակի 50-ամյա հոբելյանի տոնակատարության նախապատրաստական աշխատանքների մասին հաղորդմամբ:

Նախարարը որպես «լավ, հաջող» բնութագրեց Հայաստանի ղեկավարների հետ իր ունեցած բանակցությունները: Մենք, ասաց նա, նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ հանրապետության ռազմական ղեկավարության հետ մանրակրկիտ քննարկեցինք մեր հետաքրքրող անկյունները՝ համաձայն Հայաստանում ռուսական ռազմակայանի մասին անցյալ շաբաթ Մոսկվայում ստորագրված պայմանագրի: Վիճելի հարցեր չեն եղել, ընդգծեց գեներալ Պավել Գրաչովը: Նա ավելացրեց, որ փորձագետների մակարդակով կմշակվի պայմանագրի իրականացման մանրակրկիտ ծրագիր: Ինչպես նշեց Ռուսաստանի պաշտպանության նախարարը, այժմ բավական լրջորեն է ընթանում ռուս-հայկական մարտավարական առաջին զորավարժությունների նախապատրաստումը, որոնք կանցկացվեն մարտի վերջին Արմավիրի շրջանում: Ըստ Գրաչովի, Անդրկովկասում ռուսական զորախմբի հրամանատարի եւ ՀՀ պաշտպանության նախարարի ղեկավարությամբ, արդեն կազմվել է զորավարժություններին մասնակցող ստորաբաժանումների փոխգործողությունը, առաջ են քաշված խնդիրները, մշակված են անհրաժեշտ փաստաթղթերը: Այդ ռազմախաղերը գաղտնագրված չեն լինի, ասաց գեներալը: Նա զգուշությամբ հայտնեց, որ «Հայաստանի եւ Ռուսաստանի օդային [illegible] ԱՊՀ այլ պետությունները»: Երբ գեներալ Պավել Գրաչովին կարելի է հաջորդ անգամ տեսնել Երեւանում: «Դա ռազմական գաղտնիք է», ժպտալով պատասխանեց նա:

Տես # էջ 2

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Գերմանիան եւ Եվրախորհուրդը Թուրքիայից պահանջում են զորքերը հեռացնել Իրաքից

Երեկ Թուրքիա ժամանած Գերմանիայի արտգործնախարար Կլաուս Քինկելը վարչապետ Թանսու Չիլլերի եւ արտգործնախարար Կարայալչընի հետ հանդիպումից հետո Թուրքիայից պահանջեց [illegible] հեռացնել զորքերը Հյուսիսային Իրաքից, որտեղ նրա գործողություններն արդեն [illegible] ազգաբնակչությանը մեծ կորուստներ են պատճառում: Զորքը ձեռնամուխ է եղել տուն-տուն խուզարկությունների եւ PKK-ի հետ որեւէ առնչություն ունեցողների ձերբակալությունների: Երեկ թուրքական զորքի հեռացման պահանջ ներկայացրեց նաեւ Եվրախորհուրդը, իսկ Ֆրանսիան հանդես եկավ [illegible] պահանջով:

Չորրորդ օրն է, ինչ շարունակվում են թուրքական օդային եւ ցամաքային ուժերի լայնածավալ ռազմական գործողությունները Հյուսիսային Իրաքում: Ըստ թուրքական բարձրաստիճան աղբյուրների տվյալների, այդ տարածքում գտնվող ՔԲԿ-ի բոլոր ճամբարներն արդեն շրջապատված են, եւ «ահաբեկիչները» ոչնչացվում են օդից եւ ցամաքից հարվածներով: Ներկայումս առավել լարված ընդհարումներ են տեղի ունենում Զախոյից հյուսիս ընկած տարածքում, որտեղ թուրքական ուժերը փորձում են կտրել քրդական զինյալների նահանջի ճանապարհը դեպի Իրան: Դիարբեքիրում տեղակայված եւ արտասահմանցի լրագրողների համար կազմակերպված բրիֆինգում թուրքական զորամիավորումների հրամանատարը մերժեց քաղաքացիական բնակչության շրջանում տուժածների վերաբերյալ լուրերը, հայտնելով, որ վերջիններս, ընդհակառակը, ցանկություն են հայտնել օգնել թուրքական բանակին, եւ նրանց տրվել են որոշակի հանձնարարություններ: Թեեւ թուրքական կողմը պնդում է, թե ՔԲԿ զինյալների տված զոհերի թիվն անցնում է 200-ից, մինչեւ չորեքշաբթի ուշ երեկո հայտարարվել է ընդամենը 85 զոհի: Թուրքական կողմի կորուստները, ըստ պաշտոնական տվյալների, կազմում են 13 զոհ եւ 4 վիրավոր: Օդային հարձակումներին մասնակցում են F-4 (Ֆանտոմ), F16 տիպի ռազմական ինքնաթիռներ եւ Սիկորսկի տիպի ուղղաթիռներ: Այն հարցին, թե թուրքական զորքերը ինչքան ժամանակ կմնան Հյուսիսային Իրաքի տարածքում, տվեց միանշանակ պատասխան. «Այնքան ժամանակ, քանի դեռ չի ոչնչացվել ՔԲԿ-ի վերջին ահաբեկիչը»: Ուշագրավ է, որ պատրաստվող ներխուժման մասին թուրքական լրատվական միջոցները հայտնել էին դեռ մեկ երկու շաբաթ առաջ, սակայն Չեչնիայի դեպքերի ժամանակ (որը Ռուսաստանի ներքին գործն է) դիվանագիտական ակտիվություն ցուցաբերած Արեւմուտքը այս անգամ [illegible] հետեւում է թուրքական բանակի այլ պետության տարածքում ծավալած պատժիչ գործողություններին: Մ. Բ.

[illegible]

Ռուսական զորքը գրավեց Արգունը

ՄՈՍԿՎԱ, 23 ՄԱՐՏ, BBC, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի փոխվարչապետ Սոսկովեցը հայտարարեց, թե ռուսական բանակի ստորաբաժանումներն այսօր գրավել են Գրոզնիից 50 կմ հեռավորության վրա գտնվող Արգուն քաղաքը եւ սպառնալիքի տակ առել դուդաեւականների գլխավոր հենակետը՝ Շալին: Չեչնիայում նոր սաստկությամբ վերսկսված պատերազմն այսօր գլխավոր թեման էր Ժնեւում Ռուսաստանի արտգործնախարար Կոզիրեւի եւ ԱՄՆ պետքարտուղար Քրիստոֆերի միջեւ կայացած խոսակցության: Ամերիկայի ներկայացուցիչը մեկ անգամ եւս պահանջեց արյունահեղության դադարեցումը, որը, նրա ասելով, մեծապես հարված է հասցրել Ռուսաստանի հեղինակությանը: Մյուս կողմից, նախագահ Ելցինն այսօր ստորագրեց հրամանագիր, որը պաշտպանում է Չեչնիայի Հանրապետության ժամանակավոր խորհրդի որոշմամբ Ումար Ավտուրխանովի նախագահությամբ 45 մարդուց բաղկացած ազգային հաշտության կոմիտեի ստեղծումը:

Ռուսաստան. Անցում ամառային ժամի

Ռուսաստանի Դաշնության կառավարության սահմանած ժամանակի հաշվարկման կարգին համապատասխան, 1995 թվականի մարտի 26-ից մինչեւ սեպտեմբերի 24-ը երկրում սահմանվում է ամառային ժամանակ: Այս առթիվ Ռուսաստանի Դաշնության ամբողջ տարածքում 1995 թվականի մարտի 26-ի ժամը 2-ին ժամացույցի սլաքները տարվում են մեկ ժամ առաջ:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գեներալ Գրաչովը գոհ է այցի արդյունքներից

Իսկ լրագրողները՝ թիկնապահներից

Սկիզբը էջ 1

Գեներալ Գրաչովի այցի արդյունքներից իր գոհունակությունը արտահայտեց նաեւ Հայաստանի պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը: Մենք, ասաց նա, եկել ենք այն եզրակացության, որ անհրաժեշտ է մշակել միջոցառումների ծրագիր, որոնց նպատակը կլինի ՌԴ ռազմակայանի մասին պայմանագրի դրույթների իրականացումը: Այդ փաստաթուղթը պատրաստ կլինի մոտակա 2-3 օրվա ընթացքում, տեղեկացրեց նախարարը: Կյանքի կոչելով պայմանագիրը, մենք կհասնենք անվտանգության տարածաշրջանում, համոզված է Ս. Սարգսյանը: Նրա կարծիքով, ռուս-հայկական ռազմաքաղաքական համագործակցությունը երբեք այնքան բարվոք չի եղել, որքան այսօր:

ՌԴ պաշտպանության նախարարի եւ նրան ուղեկցող պատվիրակության հետ Մոսկվա մեկնեց ՀՀ պետական նախարար Վազգեն Սարգսյանը: Երկու երկրների պետական դրոշներով զարդարված Երեւանի «Զվարթնոց» օդանավակայանում նրանց ճանապարհեցին ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, ՀՀ ներքին գործերի նախարար Վանո Սիրադեղյանը: Այստեղ էին նաեւ Հայաստանում ՌԴ արտակարգ ու լիազոր դեսպան Անդրեյ Ուռնովը, Անդրկովկասում ռուսաստանյան զորախմբի հրամանատար գեներալ գնդապետ Ֆյոդոր Ռեուտը, ՀՀ եւ ՌԴ պաշտպանության նախարարությունների ներկայացուցիչներ:

Ռուսաստանյան պատվիրակության այցելությունը լուսաբանող լրագրողները փաստեցին ՀՀ նախագահի եւ բարձրաստիճան պաշտոնյաների պահպանության վարչության աշխատակիցների (թիկնապահների) բարյացակամ վերաբերմունքը զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների նկատմամբ:

ԵՐԵՎԱՆ

Փաստաբանները դժգոհ են եւ վճռական

Ինչպես հայտնի է, մարտի 21-ին ֆինվորական համազգեստով մի խումբ մարդիկ ներխուժել էին «Հնգյակ» իրավաբանական կոնսուլտացիայի սենյակ եւ ծեծել փաստաբաններ Ժորա Խաչատրյանին եւ Ռաֆայել Սաֆարյանին: Երեկ տեղի ունեցած փաստաբանական կոլեգիայի նախագահության նիստն անդրադարձավ այս խնդրին եւ ընդհանրապես վերջին շրջանում փաստաբանների իրավունքների սահմանափակմանն ուղղված քայլերին: Իր ելույթում փաստաբանական կոլեգիայի նախագահության նախագահ Սուրեն Պողոսյանն այն կարծիքը հայտնեց, թե բացառված չէ, որ այդ միջադեպը կազմակերպվել է ԱԱՊՎ-ի կամ նրա համախոհների կողմից (ԱԱՊՎ-ն վարկաբեկելու նպատակով), սակայն մի բան պարզ է. «մեր փաստաբաններին սպանել չի լինի», ասաց նա հայտարարելով, թե ինքը պատրաստ է որպես պաշտպան հանդես գալ «Դրո» գաղտնի-ծառայության գործով մեղադրվողների դեմ: Ի դեպ, նիստի ընթացքում պարզվեց, որ վերոհիշյալ միջադեպը միակը չի եղել: Նույն օրը ֆինվորական համազգեստով մի քանի հոգի մտել են Երեւանի Մյասնիկյանի շրջանի իրավաբանական կոնսուլտացիայի բաժանմունք եւ հարցրել փաստաբան Հենրիկ Խաչյանին: Պարզելով, որ նա այնտեղ չէ, անծանոթները հայհոյել են նրան եւ ներկա գտնվողների առջեւ, թե «հաղորդեք նրան, թող նա իրեն կարգին պահի»: Մինչդեռ իր պաշտպանյալը, ըստ պրն. Խաչյանի, եղել է «Դրո» կառույցի ուղեկը եւ մարդասպանության մեջ չի մեղադրվում: Ընդհանրապես, ելույթ ունեցողների մեծ մասը բոլոր այս միջադեպերը գնահատեց որպես սադրանք փաստաբանների ինստիտուտի եւ ժողովրդավարության դեմ: Այն կարծիքը հայտնվեց, թե երբ փաստաբանները ի վիճակի չեն պաշտպանել իրենց իրենց, առավել եւս չեն կարող պաշտպանել ուրիշներին, ուստի անհրաժեշտ է, որ նրանց զենք կրելու իրավունք տրվի: Տեսակետներից մեկի համաձայն, իշխանությունները պատրաստ են դատապարտել կատարված միջադեպը, ինչը մեծ նշանակություն ունի:

Տեղեկացնենք, որ մարտի 21-ին կատարված դեպքի առթիվ արդեն իսկ հարուցվել է քրեական գործ:

Փաստաբան Ռուբեն Սահակյանը (որը ներկայումս զրկված է քրեական գործերով զբաղվելու իրավունքից, եւ որի դեմ քրեական գործ է հարուցված) հայտարարեց, թե այս ամենի մեջ մեղավոր են նաեւ իրենք փաստաբանները, եւ անհրաժեշտ է հրավիրել փաստաբանների համահանրապետական ժողով (այդ նպատակով նա խոստացավ իր գրպանից 500 դոլար տրամադրել): Ըստ Ռուբեն Սահակյանի, փաստաբանները ոչինչ չեն կարող անել, բացի մի բանից. պատրաստել համապատասխան պաստառներ եւ դուրս գալ ցույցի: Այդ դեպքում լրատվությունը կհասնի արտասահման: Ի դեպ, Սուրեն Պողոսյանը ներկաներին տեղեկացրեց, թե ինքը հանրապետության գլխավոր դատախազ Արտավազդ Գեւորգյանի հետ հանդիպում է ունեցել, որի ընթացքում վերջինս խոստացել է քննարկել փաստաբանների եւ նրանց պաշտպանյալների ազատ հանդիպումների արգելքի վերացման եւ Ռուբեն Սահակյանին հանրապետության դատախազության քննչական մասում քննվող գործերին մասնակցելու իրավունքի վերականգնման հարցերը: Սակայն փաստաբանների մեծ մասն այն կարծիքին էր, թե հանրապետության դատախազը պետք է վարվի ըստ օրենքի, եւ ոչ թե խոստանա քննարկել օրենքը կատարելու կամ չկատարելու հարցը:

Ի վերջո փաստաբանների կոլեգիայի նախագահությունը որոշեց տեղի ունեցածի մասին տեղյակ պահել հանրապետության նախագահին, Գերագույն խորհրդին եւ իրավապահ մարմիններին, հրավիրել Երեւան քաղաքի փաստաբանների ժողով եւ քննարկել մեկօրյա գործադուլ իրականացնելու հարցը, այս հանգամանքով անհապաղ վերանայել փաստաբանների պաշտպանությունների կատարման սահմանափակումներ եւ միջոցներ ձեռնարկել, որպեսզի փաստաբանները անօրինական կերպով չզրկվեն իրենց մասնագիտությունները կատարելու իրավունքից: Որոշվեց նաեւ դիմել ներքին գործերի նախարարությանը՝ փաստաբաններին զենքով ապահովելու խնդրով: Տեղեկացնենք, որ նիստին մասնակցում էր նաեւ ԳԽ իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Կիմ Բալայանը, իսկ Հայաստանի իրավաբանների միության նախագահ Վլադիմիր Գաբրիելյանը, որը նույնպես ներկա էր, հայտարարեց, թե ինքը պաշտպանում է ընդունված որոշումը:

Հուսանք, որ իշխանությունները կանդրադառնան այս որոշմանը եւ իրենց վերաբերմունքը կհայտնեն կատարված միջադեպի առթիվ, իսկ փաստաբանների իրավունքները կվերականգնվեն, ինչն, անկասկած, կնպաստի պաշտպանության անաչառությանը:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Չեն եղել գաղտնի հանդիպումներ Վ. Սարգսյանի հետ

«Ազգ» թերթի ս. թ. մարտի 21-ի համարում հրապարակվել է իմ անձի շուրջ մի նյութ՝ «Բանբերը» կասեցվել է, իսկ «Շրջանը» շուտով կվերահրատարակվի» վերնագրով:

Ինչ վերաբերում է ազգային տուրքի հետ կապված մեր նախկին աշխատակցի ինքնակամ հեռացմանը՝ ճիշտ է: Իսկ ինչ վերաբերում է Վազգեն Սարգսյանի հետ «գաղտնի» հանդիպումներին, չի համապատասխանում իրականությանը: Պետնախարարի հետ ունեցած երկու հանդիպում է եղել, երկուսն էլ՝ այլ լրագրողների ներկայությամբ, որոնցից մեկին, ի դեպ, մասնակից է եղել նաեւ «Ազգ» թերթի աշխատակից Արմեն Բաղդասարյանը՝ 4 տարբեր լրատվական միջոցների մոտ 10 աշխատակցի հետ (այդ թվում 3-ը՝ 7 աշխատակից ունեցող «Շրջանից»), եւ տարօրինակ է, որ պրն. Բաղդասարյանն է ստորագրել այդ նյութը: Ես չեմ կարծել, թե պարտավոր եմ եղել զեկուցել դրանց մասին մեր ամեն աշխատողի, չնայած հանդիպումները հենց հաջորդ օրը քննարկվել են խմբագրությունում:

Առավել վիրավորական է այն, որ ասվում է, իբր ես հոդվածներ եմ ստորագրել Վազգեն Սարգսյանի քաղաքական հակառակորդների դեմ: Նախ՝ իմ խմբագրած 21 համարից ոչ մեկում չեմ գտնի քաղաքական որեւէ գործչի դեմ հոդված: Երկրորդ՝ նման նյութերը պետք է, որ հրապարակվեին քաղաքական էջում, որը միշտ վարել է նույն աշխատակիցը, եւ որի բովանդակությանը հաճախ ծանոթացել եմ, ցավոք, թերթը լույս տեսնելուց հետո. հավանաբար այստեղ մեկ ուրիշ գործչի քաղաքական հակառակորդների մասին կարող էր խոսք լինել: Երրորդ՝ ես պահում եմ «Շրջանում» հրապարակված բոլոր նյութերի ձեռագրերը:

«Ազգ» թերթում տպագրված զրպարտության համար մեր նախկին աշխատակցին դատի չտալու միակ պատճառն այն է, որ նա որդին է իմ մեծ Ուսուցիչ Ռաֆայել Իշխանյանի:

ՄԻՔԱՅԵԼ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ,
«Շրջանի» նախկին գլխավոր խմբագիր

Հ. Գ. Իմ կողմից անհրաժեշտ եմ համարում ավելացնել, որ իսկապես, նման հանդիպումներից մեկին մասնակցել եմ նաեւ ես եւ կարող եմ վկայել, որ այն բացարձակապես գաղտնի չէր (դրան մասնակցում էին մոտ 10 լրագրողներ), եւ խոսքն այդ հանդիպումների ժամանակ գնում էր միանգամայն այլ խնդիրների շուրջ: Մեջբերելով Վահան Իշխանյանի խոսքերը, ես չէի ենթադրում, թե նա խոսում է նույն այդ հանդիպման մասին, այլապես հենց նույն հոդվածում կներկայացնեի իմ վերապահումները: Համենայն դեպս կարող եմ վստահեցնել, որ այն հանդիպման ժամանակ, որին, ի թիվս այլ լրագրողների, մասնակցել եմ նաեւ ես, հանրապետության ներքաղաքական կյանքի եւ առավել եւս Վազգեն Սարգսյանի քաղաքական հակառակորդների մասին որեւէ խոսակցություն չի եղել: **Ա. Բ.**

■ *Ինչպես տեղեկացանք ՀՕՄ-ի Վանաձորի գրասենյակից, ոստիկանության հետ վարվող բանակցությունները դրական արդյունքի են հանգել, քանզի ՀՀ նախագահի հրամանագրերում ոչինչ չի ասվում բարեգործական նման կազմակերպությունների գործունեությունը կասեցնելու մասին: ՆԳ աշխատակիցներին, ըստ երեւույթին, թյուրիմացության մեջ է գցել այն հանգամանքը, որ գրասենյակը գործում է ՀՅԴ քաղաքային կոմիտեի հարեւանությամբ:* **Ա. Ա.**

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ

Երկփեղկումը լուծում կստանա Ազգային եկեղեցական ժողովում

Սկիզբը էջ 1

- Վերջերս հայտարարեցիք, որ Ռուսաստանի թեմը կաթողիկոսական ընտրություններին կներկայանա 40 պատգամավորով: Ներկայումս այդ թիվը 100 է: Ինչո՞վ է բացատրվում պատգամավորների թվի կտրուկ աճը:

- Ռուսաստանի թեմի առաջնորդը ներկայացրել է լրացուցիչ տեղեկանքներ, որոնք հաստատում են հայ բնակչության ներկայիս թիվը Ռուսաստանի տարբեր քաղաքներում: Այդ փաստաթղթերի համաձայն, ռուսաստանյան թեմին տրվել է 100 պատգամավոր ունենալու իրավունք:

- Արարատյան Հայրապետական թեմում վաղուց արդեն հայտնի են կաթողիկոսական ընտրություններին մասնակից պատգամավորների անունները, սակայն հանրությանը դրանք մնում են անհայտ. ինչու՞:

- Որեւիցե գաղտնիք չկա, պատրաստ ենք սիրով տրամադրել: Այդ ցուցակները ուղարկված են Ս. Էջմիածին: Կաթողիկոսական ընտրությունները կազմակերպող Մայր աթոռի գրասենյակի կամ տեղեկատվական դիվանի իրավասությունն է լրատվության միջոցներին պարբերաբար տեղեկություններ հաղորդել կաթողիկոսական ընտրությունների ընթացքի մասին:

- Կաթողիկոսի Ձեր թեկնածության մասին շարունակու՞մ եք մնալ Գարեգին Բ. վեհափառի հետ չմրցելու նույն կարծիքին: Կտեսնե՞նք արդյոք Ձեզ կաթողիկոսի թեկնածուների շարքում:

- Այս մասին արդեն իսկ մենք մեր տեսակետը արտահայտել ենք: Երբ Գարեգին Բ. վեհափառի հետ ընտրություններում չհայտնվենք կողք կողքի երկուսով, ապա՝ այո:

- Ի՞նչ եք կարծում, նախագահի հայտարարությունն ու փոխնախագահի հարցազրույցը «Լրաբեր» ծրագրին արդյոք կառավարության միջամտություն չէ՞ եկեղեցական գործերին:

- Յուրաքանչյուր անհատ ինքն է որոշում ինչպես արտահայտել իր կարծիքը: Ես վստահ եմ, որ երբ նախագահը իր կարծիքը չհայտներ, ապա այս անգամ կմեղադրվեր նման կարեւոր իրադարձության նկատմամբ անտարբեր մնալու համար(*): Նախագահի կարծիքը տեղին էր հատկապես ներկա քաղաքական կացության պայմաններում: Թերեւս շատերի մտայնության մեջ բացառվում էր կաթողիկոսի թեկնածության առաջադրումը Անթիլիասից: Նախագահը եկավ ասելու, որ քաղաքական կացությունը հայրենիքում (նկատի ունեմ ՀՅԴ-ի գործունեության կասեցումը) բացարձակ կերպով որեւէ խոչընդոտ չի ստեղծում այս առումով:

- Ի՞նչ կասեիք մարտի 21-ին մամուլում հրապարակված մի նյութի առթիվ, ուր մասնավորապես ասվում է, որ «Հռոմի պապը պատրաստ է միջամտել Հայ Առաքելական եկեղեցու հարցերին»:

- Հռոմի կաթոլիկ եկեղեցու պետը Հայ եկեղեցու խնդիրներին չի կարող միջամտել: Հայ եկեղեցին ունի իր իշխանությունը՝ եպիսկոպոսաց դասը, հավատացելոց ժողովը: Հայ եկեղեցին իր հարցերը լուծում է ինքնուրույնաբար:

ՆՏ

(*) Այս կետում բնավ համաձայն չենք զրուցակից սրբազանի հետ: ՀՀ նախագահն ու փոխնախագահը իրենց կարծիքը հայտնել են ոչ թե ընդհանրապես այդ «կարեւոր իրադարձության նկատմամբ», այլ փաստորեն միջամտել են ընտրության պրոցեսին՝ փորձելով կանխորոշել դրանց ելքը եւ բացառել այլընտրանքները:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Արգելված մամուլի խմբագիրները դիմում են Մ. Տեր-Գուլանյանին

ՀՅԴ կուսակցության կամ նրա կողմից ֆինանսավորվող արգելված մամուլի օրգանների՝ «Երկիր», «Ազատամարտ», «Մունետիկ», «Արագաստ», «Անդրադարձ» թերթերի, «Նորք» ամսագրի խմբագիրներն ու «Հայլուր» լրատվական գործակալության տնօրենները մարտի 23-ին բաց նամակ են հղել ՀՀ ԳԽ մամուլի եւ լրատվության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Մերուժան Տեր-Գուլանյանին, որտեղ մասնավորապես ասված է. «ՀՅԴ գործունեությունը ժամանակավորապես կասեցնելու ՀՀ նախագահի դեկտեմբերի 28-ի հրամանագրից հետո արգելվել է նաեւ վերոհիշյալ թերթերի հրատարակումը: Ապօրինի կալանվել է խմբագրություններին պատկանող գույքը: Անշուշտ, Ձեզ հայտնի է նաեւ, որ զանգվածային լրատվության նշված միջոցների գործունեության արգելման վերաբերյալ ոչ ՀՀ նախագահի նշված հրամանագրում, ոչ էլ ՀՅԴ-ին առնչվող ՀՀ Գերագույն դատարանի որոշման մեջ բառ անգամ չկա: Այդ թերթերի հրատարակումը արգելված չէ նաեւ ՀՀ իշխանությունների որեւէ փաստաթղթով»: Հիշեցնելով, որ սույն հանձնաժողովում դեռեւս չի քննարկվել արդեն ամիսների վաղեմություն ունեցող այդ խնդիրը, նամակագիրները խնդրում են «հնարավորինս շուտ արագացնել հարցի նախապատրաստումն ու քննարկման կազմակերպումը»: Նամակագիրների կարծիքով, «ամենակարեւորը, սակայն, այդ քննարկման բաց ու հրապարակային կազմակերպումն է», ինչի համար էլ դիմել են Մ. Տեր-Գուլանյանին, պահանջելով հարցը քննարկել հանձնաժողովի բաց նիստում, հրապարակայնությունից չզրկված պայմաններում», կհրավիրեն «զանգվածային լրատվության փակված միջոցների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ քննարկմանը ներկա լինելու ցանկություն ունեցող բոլոր թերթերի, հեռուստատեսության եւ ռադիոյի թղթակիցներ»: Ըստ նրանց, «ցանկալի է հրավիրել նաեւ Հայաստանի լրագրողների միության ղեկավարին եւ ՀՀ գլխավոր դատախազին կամ նրա ներկայացուցչին»:

Այսօր ՀՅ Դաշնակցությունը հանրահավաք է կազմակերպում

Խմբագրությունը տեղեկացավ, որ ՀՅ Դաշնակցությունը այսօր, մարտի 24-ին, ժամը 15-ին, Ազատության հրապարակում հանրահավաք է հրավիրել, որի ընթացքում ներկայացվելու են կուսակցության դիրքորոշումները առաջիկա խորհրդարանական ընտրությունների, ինչպես նաեւ սոցիալական խնդիրների վերաբերյալ:

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է 5 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (7 8852) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ / 562863
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
Ոճը եւ ձեւավորումը ՊԱՎԵԼ ԴԱԼԼԱՔՅԱՆԻ
Apple Macintosh
համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ՇՐՋԱՆ ԱՊՀ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ղրիմի խնդիրը եւ ռուս-ուկրաինական հարաբերությունները

Արդեն մի քանի օր է, ինչ լրատվական գործակալությունները հաղորդում են այն մասին, որ Ղրիմում քաղաքական մթնոլորտը ծայրաստիճան շիկացած է:

Ամեն ինչ սկսվեց այն բանից, որ մարտի 18-ին «Գոլոս Ուկրաինի» խորհրդարանային թերթը հրապարակեց նախօրեին խորհրդարանի ընդունած երեք փաստաթղթերը եւ նախագահ Լեոնիդ Կուչմայի ստորագրած երկու օրենքները, որոնցով պաշտոնական Կիեւը ի վերջո ճշտում է իր դիրքը Ղրիմի Ինքնավար Հանրապետության իրավաքաղաքական վիճակի նկատմամբ:

Ընդունված ակտերն ըստ էության չեղյալ են հայտարարում Ղրիմի հիմնարար փաստաթղթերը, այն է՝ Ղրիմի 1992 թ. մայիսի 6-ի սահմանադրությունը եւ թերակղզում նախագահության մասին օրենքը: Իսկ ԳԽ որոշումներից մեկով Ուկրաինայի գլխավոր դատախազին հանձնարարվում է քրեական գործ հարուցել Ղրիմի նախագահ Յուրի Մեշկովի դեմ՝ Ուկրաինայի քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն (իշխանության կամ ծառայողական լիազորությունների վերազանցում):

Ուշադրության արժանի է եւս մեկ փաստաթուղթ՝ «Ղրիմի Ինքնավար Հանրապետության մասին» Ուկրաինայի օրենքը: Դրա համաձայն, «Ղրիմի Ինքնավար Հանրապետությունը Ուկրաինայի կազմի մեջ մտնող վարչատարածքային միավոր է, իսկ Ղրիմի սահմանադրությունը կկիրառվի կամ կփոփոխվի բացառապես Ուկրաինայի ԳԽ հաստատումից հետո: Նույն օրենքով, ինքնավարության բարձրագույն օրենսդիր մարմին է հռչակվում Գերագույն խորհուրդը, իսկ գործադիր իշխանության բարձրագույն մարմին՝ Ղրիմի կառավարությունը: Ինքնավարությունը կարող է ունենալ սեփական օրհներգ, զինանշան եւ դրոշ, բայց դրանք պետք է օգտագործվեն միայն ուկրաինականների հետ մեկտեղ:

Մի խոսքով, ընդունված բոլոր ակտերը վկայում են, որ պաշտոնական Կիեւը Ղրիմի ինքնավարությունը վերադարձել է Ուկրաինայի պետականության ոլորտ:

Ամբողջ հարցն այն է, թե կոնկրետ երբ են ընդունվել այդ բոլոր ակտերը: Մեր կարծիքով, Ղրիմի խնդիրը լուծվում է ռուս-ուկրաինական հարաբերությունների տեսանկյունից: Դրանցում հիմնարար հարցը Սեւծովյան նավատորմի բաժանման խնդիրն է, որը վիճարկվում է այն պահից, երբ Ուկրաինան իրեն անկախ հռչակեց: Այս մեծ հարցը լարվածության մեջ է պահել ռուս-ուկրաինական հարաբերությունները: Հարկ է նշել, որ Ղրիմի խնդիրը վերջին տարիներին Ռուսաստանի քաղաքականության հենց այն լծակն էր, որի միջոցով «ձեւակերտվում էին» Սեւծովյան նավատորմի բաժանմանը վերաբերող պայմանագրի կետերը: Ըստ երեւույթին, որոշ դեր է խաղացել նաեւ այն հանգամանքը (ինչպես արդարացիորեն նշել են դիտորդները), որ «տեղի է ունեցել կարծես թե Չեչնիայի եւ Ղրիմի դիվանագիտական լուռ փոխանակում», քանի որ Ռուսաստանը ժամանակին հասել է այն բանին, որ Ուկրաինան չի միջամտել Չեչնիայի իրադարձություններին եւ դրանք համարել է Ռուսաստանի ներքին գործը:

Սակայն կարծում ենք, որ այս բոլորն ընդամենը «սառցալեռան կատարն է»: Իրականում Ռուսաստանը աջակցելով Ղրիմի ռուսամետ ուժերին, քայլ առ քայլ ոչ կոմունիստական Կիեւի համաձայնությունն էր «կորզում» Սեւծովյան նավատորմի բաժանման եւ ծովային սահմանների պատկանելության վերաբերյալ: Այս տարվա սկզբից ռուսական կողմը ձեռնարկեց որոշակի քայլեր, այն է՝ պաշտոնական Կիեւին մատակարարվող էներգակիրների դիմաց գոյացած «պարտքերի» անդադար հիշեցումներ: Ուկրաինայի ղեկավարությունը իր անկախությունն ապացուցող երկչոտ քայլերի էր դիմում: Սակայն Արեւմուտքի օգնության խոստումներն առայժմ մնում են լոկ բարի մտադրություններ: Սակայն Ուկրաինայի ղեկավարության ձեռնարկած այդ բոլոր քայլերը կնպաստեն նախագահ Լեոնիդ Կուչմայի քաղաքական դիրքերի ամրապնդմանը, որին ռուսամետ մարդ էին համարում: Այս փաստը որոշ առումով ձեռնտու էր նաեւ Ռուսաստանի ղեկավարությանը, քանզի նման պաշտոնում հարկավոր է ունենալ «զիջող» մարդ:

Վերջին հաշվով, ռուս-ուկրաինական հարաբերությունների ներկա վիճակը պետք է դիտել ԱՊՀ-ում տեղի ունեցող գործընթացների տեսանկյունից: Իրավիճակը շատ նման է «Բելովեժյան համաձայնագրի» ստորագրման ժամանակաշրջանի իրադրությանը: Տեղի է ունենում նախ եւ առաջ միջուկային սպառազինությունների վերահսկմանն առնչվող պայմանագրերի կնքման անձայն գործընթաց: Վերջերս ջերմացած ռուս-բելոռուսական, ռուս-ղազախական, իսկ հիմա նաեւ ռուս-ուկրաինական հարաբերությունները հենց այդ են վկայում:

Ռուսաստանն, իհարկե, այդ բոլոր բարենպաստ հանգամանքների համար «վճարում է ներքին գործերին չմիջամտելով», ինչպես նա վարվեց Ղազախստանի հետ, որտեղ ցրված է խորհրդարանը, իսկ հիմա վարվում է Ուկրաինայի հետ, որտեղ սրվել է Ղրիմի իրադրությունը:

Ամենայն հավանականությամբ, Ռուսաստանի արտաքին քաղաքական դոկտրինայի կետերից մեկը՝ ԱՊՀ երկրներում ռուսամետ քաղաքական ուժերին աջակցելու կետը սկսում է պտուղներ տալ: Իհարկե, Ռուսաստանը ընդհանրապես չի խորշում օգտագործել նաեւ տնտեսական լծակներ, որպեսզի քննարկվող հարցերում հասնի իր նպատակին:

Պատահական չէ նաեւ նախկին ԽՍՀՄ երեք հանրապետությունների՝ Ուկրաինայի, Բելոռուսիայի եւ Ղազախստանի ընտրությունը, որոնց հետ ռուսական կողմը սկսել է լայնընդգրկուն համաձայնագրեր ստորագրել, եթե նկատի ունենանք, որ դրանք բոլորը «միջուկային» երկրներ են:

Դժվար չէ ենթադրել, որ Ռուսաստան-Ուկրաինա, Բելոռուսիա-Ղազախստան նոր դաշինքին հետագայում կցանկանան միանալ ԱՊՀ նաեւ ուրիշ երկրներ:

ՌՈԶԱ ԳԱՐԻԲՅԱՆ,
Պատմագիտության թեկնածու

ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Անկարան եւ Կիեւը արդեն կիսում են Բաքվի նավթը...

«Ուկրաինան, Ռուսաստանը եւ Թուրքիան տարածաշրջանի երեք հզոր երկրներն են եւ ստիպված են միմյանց հետ համագործակցել», հայտարարեց Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելն Անկարայում գտնվող ուկրաինական պաշտոնական պատվիրակության պատվին կազմակերպված ընդունելության ժամանակ: Վերջինս այստեղ է ժամանել Միջերկրականից դեպի Սեւ ծով կառուցվելիք նավթամուղով Ուկրաինա նավթ փոխադրելու հնարավորությունները ուսումնասիրելու նպատակով: Ամեն ինչ սովորական կլիներ, եթե չլիներ մի հանգամանք. խոսքը վերաբերում է այն նավթին, որը այդքան աղմուկ հանած Բաքու-Ջեյհան (Յումուրթալըք) ուղեգծով Կասպից ծովից պիտի տեղափոխվի Միջերկրական, երբ... նավթամուղի թուրքական տարբերակը իրականություն դառնա, ինչն առայժմ կասկածելի է: Փաստորեն Անկարան եւ Կիեւն արդեն այսօր սկսում են կիսել դեռ միայն նախագծերում գոյություն ունեցող նավթը:

Ինչեւէ, Դեմիրելն այդ քայլը գնահատել է որպես Կիեւի կողմից նավթամուղի թուրքական տարբերակին տրվող աջակցություն եւ իր երախտագիտությունը հայտնել ուկրաինական պատվիրակությանը:

ՄՈՒՐԱԴ ԲՈՋՈԼՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆ

Աշխարհաքաղաքականության մեջ ինքնագործունեությունը վտանգավոր է

Հայտնի է, որ վերակառուցման սկզբից նախկին ԽՍՀՄ ժողովուրդները համախմբման եւ ինքնահաստատման ժամանակաշրջան են ապրում: Ի հայտ են եկել զանազան տվյալներ այս կամ այն ժողովրդի թվակազմի մասին: Այս առումով ադրբեջանցիները բացառություն չեն կազմում, ըստ երեւույթին հույսերը դնելով խորհրդային մտածողության մեջ «քանակի» փաստի դերի վրա: Արդեն 1988 թ. հայտնվեցին Ադրբեջանում 10 մլն. ադրբեջանցիների գոյությանը վերաբերող թվեր (եւ սա հանրապետության 7 մլն. 380 հազար ընդհանուր բնակչության դեպքում), 10 մլն. ադրբեջանցի էլ նշված է Հյուսիսային Իրանում: Իհարկե, այս բոլոր անտեղի «տվյալները» կատարում էին զուտ քաղաքական դեր: Ի դեպ, դա ինչ-որ չափով ներգործեց 1988-1990 թթ.: Հիշե՞նք, դեռ 1988 թ. Բաքվի հանրահավաքներում կոչեր էին արվում ժողովրդի «ադրբեջանցիներ» անվանումը փոխարինել «թուրքերով»: Բայց դա մոռացվեց, քանի որ ռուսական այբուբենը հարկավոր էր փոխարինել լատինականով (ինչպես Թուրքիայում է):

Դատելով մամուլից, այժմ նոր ժամանակաշրջան է սկսվել ադրբեջանցիների էթնիկական ինքնագիտակցության ամրապնդման համար: Եւ կրկին հայտնվել են «թվեր»: Պարզվում է, որ Ադրբեջանի քաղաքական կենտրոնի հաշվարկների համաձայն, նրանք այլեւս «թուրք» չեն, իսկ աշխարհում ադրբեջանցիների թվակազմն արդեն հասնում է 40-50 մլն.-ի: Ստացվում է նաեւ, որ «Դա Մերձավոր Արեւելքում ամենամեծ թյուրքական էթնոսն է, որը թյուրքագետների կարծիքով (ի դեպ, ԽՍՀՄ թյուրքագիտության կենտրոնը գտնվում է Բաքվում) կարող է հաջորդ հարյուրամյակում իրականացնել համընդհանուր թյուրքական միավորման գաղափարը»:

Ադրբեջանի գաղափարախոսներն այս բոլոր տվյալները հրապարակում են հիմնականում իրենց երկրից դուրս: Նրանք իրենց «արշավը» սկսել են ռուսական մամուլից:

Այդ կերպ գաղափարախոսների «ինքնագործունեության» նպատակը մեկն է. մոլորության մեջ գցել աշխարհաքաղաքական այն համադրույթների հեղինակներին, որոնցում առկա է Ադրբեջանը:

Ռ. Գ.

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Թբիլիսիի հայկական եկեղեցու ճակատագիրը՝ մտահոգիչ

«Ազգը» խոսել է Թբիլիսիի հայկական Նորաշենի Ս. Աստվածածին եկեղեցու սեփականացման փորձի մասին: Մենք դիմեցինք ճարտարապետության դոկտոր Մուրադ Հասրաթյանին, խնդրելով ավելի մանրամասն տեղեկություններ տալ ու մեկնաբանել այդ երեւույթը:

Ինչպես երեւում է նրա [illegible], վրացիները նպատակ են դրել Վրաստանի, առաջին հերթին Թբիլիսիի հայկական եկեղեցիները յուրացնել: Ասենք, որ 20-րդ դարի սկզբին Թբիլիսիում կար հայկական 24 եկեղեցի, դրանցից 30-ական թթ. կուլտուրական հեղափոխության ժամանակ 10-ը քանդվեց: Քանդվեց նաեւ 14-րդ դարում հիմնադրված Հառանց վանքը՝ քաղաքի կենտրոնում (որի զանգակատունն է մնում), Խոջիվանքը, Սուրբ Սարգիս, Հրեշտակապետաց եւ այլ եկեղեցիներ: Կանգուն եւ անվնաս մնացածներից մի քանիսը, ինչպես ըստ երեւում, օգտագործվել են այլ նպատակներով (կինոթատրոն, պահեստ, արտադրամաս, փայտամշակման արհեստանոց): Վերջին տարիներին, վերանորոգումների պատրվակով, Վրաստանում սկսեցին հայկական եկեղեցիների վրայից քերել հանելով, փորագրությունները տաշելով կամ սվաղելով միջոցով վերացնել արձանագրությունները: Ավելին, այս մոտեցումը նրանք «հիմնավորում էին», թե եկեղեցիները կառուցել են վրացիները, իսկ հայերը միայն զավթել են: Մուղնու Ս. Գեւորգ եկեղեցին կառուցվել է 13-րդ դարում: Աշտարակի Մուղնու վանքից 13-րդ դարում Ս. Գեւորգի մասունքները Վրաստան են տեղափոխել վրաց արքայազնի [illegible] նպատակով, հետո մասունքները ամփոփվում են



Ձախից Նորաշեն եկեղեցին, կողքին վրացականը

հայկական նոր հիմնված եկեղեցում, որն ստանում է Մուղնու վանք անունը: Այժմ վրացիները այդ եկեղեցին ոչ միայն օգտագործում են որպես ազգագրական թանգարան, այլեւ հայտարարում, թե իրենց եկեղեցին է: Նորաշենը (պաշտոնական անունը Սուրբ Աստվածածին) եկեղեցին կառուցվել է 1737 թ., հայ մեծահարուստ խոջա Նազարի միջոցներով: Այդ մասին տեղեկություններ կան նաեւ վրացական աղբյուրներում, որ ժամանակին ավելի օբյեկտիվ էին, քան հիմա: Լ. Մելիքսեթ-Բեկի «Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին» աշխատության մեջ (հատոր գ) նշվում է. «Թագավորական [illegible] արեւմտյան կողմում կա Նորաշեն (ախալ [illegible]) կոչված մի եկեղեցի, գմբեթավոր, [illegible] աղյուսից ու կրով, չորս սյան վրա կառուցված: [illegible] Նազարի [illegible] շարունակել են եւ ավարտել Տփղիսի կանանց եւ արանց ձեռնտվությամբ (հավաքված) միջոցներով 1737 թվին եւ նրանից հետո մինչեւ այժմ էլ շինվում է»: 1793 թ. եկեղեցու ներսը որմնանկարներով զարդարել է Հովնաթան Հովնաթանյանը, որ այդ տարիներին վրաց Հերակլ 2-րդ թագավորի պալատական նկարիչն էր:

Վրաց կաթողիկոսությունը ցանկանում է եկեղեցին (որ մինչ այդ օգտագործվել է այլ նպատակներով, իսկ վերջին տարիներին փակ է եղել) դարձնել վրացական գործող եկեղեցի: Չմոռանանք, որ այժմյան դրությամբ նրանք Թբիլիսիում միայն 2 հայկական եկեղեցու են թույլ տվել գործելու (Ս. Գեւորգ եւ Հավլաբարի Ս. Էջմիածին): Պահպանվել է հայկական 10 եկեղեցի, որոնցից մի քանիսը կարող են այսօր էլ դառնալ գործող եկեղեցի (Ս. Նշան, Ս. Կարապետ, Ս. Ստեփանոս): Շիրակի թեմի առաջնորդ Գրիգորիս արք. Բունիաթյանի, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանի եւ Հոգեւոր Գեւորգյան խորհրդի անդամ Ռաֆայել Պապայանի առաքելությունը Թբիլիսի կասեցրել է եկեղեցիների յուրացման փորձը, մնում է հուսալ, որ մեր դարավոր հարեւանները երկու ժողովուրդների համար այդ նուրբ հարցն ավելի խոհեմ ու [illegible] կլուծեն:

ՅՈՒՐԻ ՍԱՍԱԴՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Ուսանողական հուզումներ Քիշնեւում

«Մոլդավպրեսը» հաղորդում է, ուսանողական հուզումները Քիշնեւում մարտի 22-ին լայն թափ են ստացել: Չնայած քաղաքային իշխանությունների արգելքին, Մոլդովայի մայրաքաղաքի կենտրոնական հրապարակ են դուրս եկել մայրաքաղաքի բուհերի, լիցեյների, դպրոցների տասնյակ հազարավոր սովորողներ եւ դասախոսներ, որի հետեւանքով կազմալուծվել է երթեւեկությունը: Նախկինի նման ցուցարարները պահանջում են ծրագրում պահպանել ռումիներենի եւ Ռումինիայի պատմության ուսուցումը, ավելացնել կրթաթոշակներն ու աշխատավարձը, ավելի լայն իրավունքներ ընձեռել ուսումնական հաստատություններին: Խորհրդարանի փոխնախագահ Նիկոլայ Անդրոնիկը գտնում է, որ ուսանողների թիկունքին կանգնած են քաղաքական գործիչները, որոնք ցանկանում են ապակայունացնել հանրապետության իրադրությունը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

■ *Մարտի 23-ին Կիրգիզիայում հումանիտար օգնության խմբաքանակ է ստացվել ԱՄՆ-ից՝ բրինձ, կաթի փոշի, բուսական յուղ: Ինչպես հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, բարեգործական գործողությունը անցկացվում է Կարմիր Խաչի ընկերությունների համաշխարհային ֆեդերացիայի նախաձեռնությամբ եւ նախատեսված է 70 հազար մարդու համար: Որպես նախաձեռնող հանդես է եկել ԱՄՆ-ի գյուղատնտեսության նախարարությունը: Հանրապետությունում ստացված ապրանքները կբաժանվեն հաշմանդամներին, բազմազավակ ընտանիքներին եւ մեծահասակներին:*

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Ազգ

ազգային

ԱՄԲԻՈՆ

Սահմանադրական դատարանի առաքելությունը

«Ազգի» հարցերին պատասխանում է ՀՀ ԳԽ սահմանադրական հանձնաժողովի անդամ, իրավագիտության դոկտոր Վլադիմիր Նազարյանը

ՀՀ ԳԽ սահմանադրական հանձնաժողովի կողմից մշակված հանրապետության Հիմնական օրենքի նախագծում թերեւս ամենից մեծ հետաքրքրություն են հարուցում Սահմանադրական դատարանի վերաբերյալ դրույթները: Եւ դա բնական է, քանի որ ստեղծվում է մեզ համար միանգամայն նոր մարմին, որը դատական ֆունկցիաների համատեղ բարձրագույն վերահսկողություն է իրականացնում պետական մարմինների եւ պաշտոնատար անձանց գործողությունների նկատմամբ, ապահովում Սահմանադրության դրույթների անշեղ պահպանումը: Սույն հարցազրույցում լուսաբանվում է այդ մարմնի կազմավորման կարգը եւ գործունեությունը:

— Ինչո՞վ է պայմանավորված Սահմանադրական դատարանի ստեղծումը:

- Մի շարք հանգամանքներով եւ առաջին հերթին Սահմանադրության պահանջներն անշեղ ու միանշանակ կիրառելու անհրաժեշտությամբ: Միայն այդ ճանապարհով է հնարավոր Սահմանադրության ժողովրդավարական ներուժը հաղորդել օրենսդրությանն եւ ստեղծել ներդաշնակ իրավական համակարգ:

ՀՀ Սահմանադրության միասնական նախագծի սահմանադրական կարգի հիմունքներին վերաբերող առաջին գլխի 6 հոդվածում ասված է, որ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, նրա նորմերն օժտված են անմիջական գործողությամբ: Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքները, ինչպես նաեւ Սահմանադրությանը եւ օրենքներին հակասող ճանաչված իրավական այլ ակտերն իրավաբանական ուժ չունեն»:

Սահմանադրական դատարանը կոչված է սահմանադրական փորձաքննության ենթարկելու օրենքները եւ մյուս իրավական ակտերը նրանց ու Սահմանադրության մեջ հակասություն հայտնաբերելու դեպքում դրանք վերացնելու իրավունքով:

- Գործնականում դա ինչպե՞ս է կատարվելու:

- Նախագիծը սահմանում է Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող պետական մարմինների ու պաշտոնատար անձանց ցանկը: Դրանք են. «1) հանրապետության նախագահը, 2) Ազգային ժողովը կամ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ երրորդը, 3) հանրապետության նախագահի եւ պատգամավորության թեկնածուները՝ ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով, 4) Մարդու իրավունքների պաշտպանը՝ քաղաքացու սահմանադրական իրավունքներին եւ ազատություններին վերաբերող օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հանրապետության նախագահի հրամանագրերի եւ կառավարության որոշումների կապակցությամբ, 5) կառավարությունը»:

Ըստ որում, դիմումը պարտադիր պայման է, քանի որ, համաձայն նախագծի՝ Սահմանադրական դատարան գործերը գնում են միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

- Կարող են լինել դեպքեր, երբ Սահմանադրությանը հակասում է ոչ թե օրենքը կամ օրենսգիրքն ամբողջությամբ, այլ նրա առանձին հոդվածները կամ դրույթները: Ի՞նչ կերպ է վարվում նման պարագայում Սահմանադրական դատարանը:

- Նախապես պարզելով օրենքի կամ օրենսգրքի համապատասխան հոդվածների (դրույթների) հակասությունը Սահմանադրությանը, Սահմանադրական դատարանը պարզում է այդ հոդվածները կամ դրույթները բաժանելի՞ են, արդյոք, օրենքի կամ օրենսգրքի բովանդակությունից, թե՞ ոչ, այսինքն՝ կարո՞ղ են այդ ակտերն ամբողջական ձեւով գործել առանց Սահմանադրությանը հակասող հոդվածների եւ դրույթների, թե՞ ոչ: Սահմանադրությանը հակասող հոդվածները կամ դրույթներն օրենքի (կամ օրենսգրքի) բովանդակությունից բաժանելի լինելու դեպքում Սահմանադրական դատարանը կարող է Սահմանադրությանը հակասող ճանաչել միայն այդ հոդվածները (դրույթները) եւ հնարավոր համարել օրենքի կամ օրենսգրքի հետագա գործողությունը նրանց տեքստից այդ հոդվածները կամ դրույթները հանելու պայմանով:

Օրենքի կամ օրենսգրքի բովանդակությունից Սահմանադրությանը հակասող հոդվածի կամ դրույթի անբաժանելիության դեպքում Սահմանադրական դատարանը որոշում է կայացնում ամբողջությամբ վերցրած օրենքի կամ օրենսգրքի ուժը կորցրած ճանաչելու մասին:

- Իսկ երբ Սահմանադրությանը հակասում է ոչ թե օրենքը, այլ Հայաստանի Հանրապետության անունից կնքված, սակայն դեռ չվավերացված միջազգային պայմանագիրը կամ նրանում ամրագրված պարտավորությունը, ինչպե՞ս է վարվում Սահմանադրական դատարանն այս դեպքում:

- Ազգային ժողովի կողմից վավերացման ենթակա բոլոր միջազգային պայմանագրերը նախապես ներկայացվում են Սահմանադրական դատարանի եզրակացությանը: Վերջինս այդ պայմանագրերում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող որեւէ դրույթ հայտնաբերելու դեպքում արգելում է դրանց վավերացումը: Նախագծում ասված է, որ «Ազգային ժողովի կողմից վավերացման ենթակա միջազգային պայմանագրերի շրջանակը որոշվում է օրենքով: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը կարող են վավերացվել Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո»:

- Ի՞նչ խնդիրներ ունի Սահմանադրական դատարանը կապված հանրաքվեների, հանրապետության նախագահի եւ պատգամավորների ընտրությունների հետ:

- Համաձայն նախագծի, Սահմանադրական հանձնաժողովը «լուծում է հանրաքվեների, հանրապետության նախագահի եւ պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը»: Գործող ընտրական օրենսդրությամբ նման վեճերի լուծման իրավունքը վերապահված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, այն մարմնին, որն ինքն է կազմակերպում ու անցկացնում ընտրությունները եւ բացառված չէ, որ հենց ինքն էլ կարող է լինել թույլ տրված խախտումների հեղինակը:

Սահմանադրական դատարանն ընտրությունների կազմակերպմանը եւ անցկացմանը որեւէ մասնակցություն չունի եւ միանգամայն արդարացի է դրանց արդյունքների հետ կապված վեճերի լուծման իրավունքը այդ դատարանին վերապահելը:

Սահմանադրության ընդունումից հետո, անշուշտ, կընդունվի օրենք Սահմանադրական դատարանի գործունեության կարգի մասին, որում մանրակրկիտ կսահմանվի նման վեճերի լուծման ընթացակարգը:

- Նախագծում ամրագրված Սահմանադրական դատարանի մի շարք լիազորություններ կապված են հանրապետության նախագահի գործունեության հետ: Ի՞նչ կասեիք այդ լիազորությունների մասին:

- Դրանցից առաջինը վերաբերում է հանրապետության նախագահի ընտրությանը, որի ընթացքում թեկնածուների մոտ կարող է առաջանալ որեւէ անհաղթահարելի խոչընդոտ եւ կարող է հիմք ծառայել ընտրությունները հետաձգելու կամ նոր ընտրություններ նշանակելու համար: Համաձայն նախագծի, Սահմանադրական դատարանը «Անհաղթահարելի կամ վերացված է ճանաչում հանրապետության նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտը»:

Մյուս լիազորություններն առնչվում են հանրապետության նախագահի գործունեության եւ նրան պաշտոնանկ անելու պարագայի հետ: Նախագիծը հանրապետության նախագահին իրավունք է վերապահում պետության սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով վարչապետի եւ Ազգային ժողովի նախագահի հետ, իրականացնել իրավիճակից բխող միջոցառումներ: Սահմանադրական դատարանը հետեւում է այդ միջոցառումների իրականացմանը եւ դրանց վերաբերյալ եզրակացություն է տալիս Ազգային ժողովին, որը դրա հիման վրա կարող է դադարեցնել հանրապետության նախագահի միջոցառումների իրականացումը:

Նախագծի համաձայն՝ Սահմանադրական դատարանը նաեւ «եզրակացություն է տալիս հանրապետության նախագահի կողմից իր լիազորությունների կատարման անհնարինության մասին»: Խոսքը գնում է նախագահի ծանր հիվանդության կամ նրա լիազորությունների կատարման համար այլ անհաղթահարելի խոչընդոտների առաջացման մասին: Այս դեպքերում Ազգային ժողովը Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա իր պատգամավորների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով պաշտոնից ազատում է հանրապետության նախագահին:

Նախագծում սահմանված է, որ «Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել հայրենիքին դավաճանելու, կաշառակերության կամ այլ ծանր հանցագործություն կատարելու դեպքում»: Սահմանադրական դատարանը «եզրակացություն է տալիս հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին»:

- Ինչու՞ է նախագծում Սահմանադրական դատարանին վերապահվել կուսակցությունների գործունեության կասեցման կամ արգելման իրավունքը:

- Նախագիծն ամրագրում է կուսակցությունների սահմանադրական կարգավիճակը: 7 հոդվածում ասված է, որ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում է բազմակուսակցությունը: Կուսակցությունները կազմավորվում են ազատ, նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձեւավորմանը եւ արտահայտմանը: Նրանց գործունեությունը չպետք է հակասի Սահմանադրությանը եւ օրենքներին, իսկ կառուցվածքն ու գործելակերպը՝ ժողովրդավարության սկզբունքներին»:

Նման կարգավիճակի պայմաններում միանգամայն ճիշտ է կուսակցությունների գործունեության կասեցման եւ արգելման լիազորության հանելն ընդհանուր իրավասության դատարաններից եւ այն վերապահել Սահմանադրական դատարանին: Ըստ որում, նախագծում սահմանված է, որ Սահմանադրական դատարանը կարող է նման որոշում ընդունել իր անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

- Եւ, վերջապես, ինչպե՞ս է կազմավորվում Սահմանադրական դատարանը:

- Նախագծում ասված է, որ «Սահմանադրական դատարանը կազմված է ինը անդամից, որից հինգին նշանակում է Ազգային ժողովը, չորսին՝ հանրապետության նախագահը:

Հանրապետության նախագահը Սահմանադրական դատարանի կազմից նշանակում է նախագահ»:

Սահմանադրական դատարանի անդամների համար նախագիծը սահմանում է դատավորներին բնորոշ գործունեության երաշխիքներ:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

«Հայկական հարցը չի կարելի կոծկել, կոտորածները տեղի են ունեցել»

Ասում է արաբկիրցի թուրք մտավորականը

Այսօր [illegible] Արաբկիր [illegible] 1986 թվին լույս էր ընծայել մի տարեգիրք, որի հեղինակները, հետեւելով մի շարք այլ [illegible] թուրք պատմաբանների օրինակին, ամբողջովին խեղաթյուրել են երկրի պատմական անցյալը [illegible] երկրի [illegible] հայկականը եւ հայերին ներկայացնել միայն բացասական գույներով: Փաստն այնքան ակնառու էր, որ մի այլ թուրք մտավորական [illegible] Բեյլեմիրը, իր պարտքն էր համարել Արաբկիրում լույս տեսնող «Arabkir postasi» («Արաբկիրի փոստատարը») թերթում գրել «[illegible]» խորագրով գրախոսական, որտեղ փորձում է վերականգնել պատմական ճշմարտությունը: [illegible]

1. Տարեգրքի 32-րդ էջում նշված է, որ մ. թ. ա. 712 թ. Ասորեստանի Սարգոն թագավորն այս երկրում է բնակեցրել Միջագետքից բերված տարագրյալներին: Դա, անշուշտ, պատմական փաստ է, սակայն [illegible] հայկական [illegible] Արաբկիրը կոչվում էր Դազկուզա (Dazkuza):

Արաբ տարագրյալների բնակեցումից հետո երկրի էթնիկական [illegible] փոփոխման էր ենթարկվել, [illegible] Արաբկեր [illegible] անվանումը: Հետագայում տեղի բնակչությունն այդ անունը [illegible] Arapgır-ի (արաբական բնակավայր):

Հայերն ու [illegible] էին, որ բյուզանդացիները հեռանան այս վայրերից, դրա համար էլ օգնել են Ալփասլանին: Տարեգրքի հեղինակները ի՞նչ նպատակ են հետապնդում հայկական Արաբկիր անունը [illegible]: Ու՞ր արաբներն են [illegible] հայերից: [illegible] մ. թ. ա. 712 թվին Dazkuza անունը պատմության [illegible]: Ինչպե՞ս էր կոչվում այդ քաղաքը մ. թ. ա. 712-ից մինչեւ [illegible]: Պատասխանը պարզ է:

Նկատելի է, որ [illegible] 38-րդ էջում տեղ գտած հայերին վերաբերող [illegible]: Հայերի [illegible] Թալեաթ փաշայի [illegible]:

[illegible] Իսկ ինչո՞ւ հայերը [illegible]:

Վերջին հարյուր տարում հայերին [illegible] Սամսոնում [illegible] արաբկիրցիներ Սարգիսի եւ Միհրանի [illegible] հայերի վրա [illegible] համար:

Տարեգրքի 39-րդ էջում [illegible] 600 հազար հայեր, իսկ 600 հազար [illegible] 1918-1920 թթ. [illegible]:

[illegible]

Հայկական հարցը չի կարելի կոծկել [illegible] կոտորածները տեղի են ունեցել:

ՄՈՒՐԱԴ [illegible]

NAVI
ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՎԻԱՉՎԵՐԹՆԵՐ
ԵՐԵՎԱՆԻՑ



ՕՄՍԿ
ԴԵՆԶԱ
ՀԵՐԹԱԿԱՆ ՉՎԵՐԹՆԵՐԸ
ՄԱՐՏԻ 28-ԻՆ
ՄԱՐՏԻ 29-ԻՆ
✉ «ՍԵՎԱՆ» Հյուրանոց, 120 սենյակ
Աբովյան - 7, ռուսական թատրոնի դրամարկղ
☎ 56-49-78, 56-28-09, 58-26-53, 56-01-33, 56-18-26, 56-26-53

ԱԶԳ

միջազգային

ԵՐԹԱՆ

Թուրքիան մտադիր է յուրացնել միջինասիական նավթի մի մասը

Սեւծովյան նեղուցներով անցման սահմանափակումների հետեւանքով Ռուսաստանը կկորցնի 450 հազար տոննա նավթ

Բոսֆորի եւ Դարդանելի նեղուցներով նավթալցանավերի անցման սահմանափակումների պատճառական պատրվակ ծառայեց 1994 թ. մարտի 13-ին Սեւ ծովից նեղուցներ մտնելիս կիպրական Nassia նավթալցանավի վթարը: Հատկանշականը ռուսական նավթ էր տանում: Թուրքիան նույն տարվա հուլիսի 1-ից մտցրեց նեղուցներով նավթալցանավերի անցման սահմանափակումներ: Այդ միջոցառումներն առաջին հերթին դիպան Ռուսաստանի շահերին, որն իր սեւծովյան նավահանգիստներից մինչեւ 30 մլն. տոննա նավթ է արտահանում միջերկրածովյան երկրներ: Ուստի զարմանալի չէ, որ այդ հարցով զբաղվեց նույնիսկ Պետդուման: Դրա միջազգային գործերի կոմիտեն վերջերս խորհրդարանային ունկնդրումներ անցկացրեց Բոսֆորի եւ Դարդանելի նեղուցներով նավագնացության ազատության հարցի վերաբերյալ:

Ներկայումս Բոսֆորի եւ Դարդանելի նեղուցներով քաղաքացիական եւ ռազմական նավերի անցման կանոնակարգը սահմանվում է Շվեյցարիայի Մոնտրյո քաղաքում 1936 թ. հուլիսի 20-ին ստորագրված «Սեւծովյան նեղուցների ռեժիմի միջազգագրով»: Մինչեւ Բոսֆորում նավթալցանավի խոշոր վթարը նման հարց չէր ծագել: Հակառակը, Թուրքիան որոշեց իրավիճակն օգտագործել իր տարածքում ԱՊՀ երկրներից (Ղազախստան, Ադրբեջան, Թուրքմենիա) արտահանվող նավթի մի մասի արտահանման նավթամուղների համակարգ ստեղծելու համար:

ՌԴ վառելիքի եւ էներգետիկայի նախարարության հաշվարկների համաձայն, 2010 թ. սեւծովյան նեղուցներով կարող է անցնել մինչեւ 70-100 մլն. տոննա նավթ, առանց հաշվի առնելու այն նավթը, որ Արեւմուտքը մտադիր է գնել Ադրբեջանից (այն կտարվի հակառակ ուղղությամբ, նեղուցներով դեպի Սեւ ծով): ԱՊՀ երկրներից նավթի մի մասի փոխադրման այլընտրանքային տարբերակների քննարկման համար (17-20 մլն. տոննա Թուրքիայով եւ մինչեւ 40 մլն. տոննա Բուլղարիայի Բուրգաս նավահանգստով եւ այնուհետեւ խողովակաշարով մինչեւ հունական Ալեքսանդրուպոլիս) վառելիքի եւ էներգետիկայի նախարարությունում ստեղծված է համատեղ աշխատանքային խումբ: Երկու դեպքերում էլ խոսք ընթանում է Նովոռոսիյսկի նավթային նավահանգստից: Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս խողովակաշարի կառուցման հարցը բարձրացվել է մեկ տարի առաջ: 1994 թ. դեկտեմբերին ՌԴ կառավարության ընդունած որոշումը նավթատարությանը պարտավորեցնում է ստորագրել համապատասխան միջկառավարական համաձայնագիր: Սակայն բանակցող երկրներից ոչ մեկն առայժմ ներդրումներ չունի շինարարության համար, քանի Հունաստանը հույս ունի դրանք ստանալ Եվրամիության երկրներից:

Սեւծովյան նեղուցներով նավագնացությունը սահմանափակելու Թուրքիայի որոշումն արդեն հարուցել է Մոնտրյոյի միջազգագիրը ստորագրած երկրների բազմաթիվ արձագանքը: Առավել անհաշտ դիրք են բռնել Ռուսաստանը, Հունաստանը եւ Կիպրոսը, որոնց դրոշներով է նեղուցներով անցնում նավթալցանավերի մեծ մասը: Միջազգագիրը ստորագրած բոլոր երկրները չեն ուզում դրա վերանայման անցանկալի նախադեպ ունենալ, որը կարող է լինել աշխարհի այլ նեղուցներով նավարկության ազատության սահմանափակման: Չէ որ երբ Թուրքիայի պահանջները բավարարվեն, ապա Սինգապուրը կարող է նույն սահմանափակումները մտցնել Մալակկայի նեղուցում, իսկ Դանիան՝ Մեծ Բելտ նեղուցում: Թուրքիային չպաշտպանեց նաեւ նավագնացության անվտանգության միջազգային կոմիտեն: Ի դեպ, երբ քննարկվեն նեղուցներով նավարկության կանոնների վերաբերյալ այդ կոմիտեի կանոնները, ապա Թուրքիան ստիպված կլինի հրաժարվել Մոնտրյոյի միջազգագրի որոշ դրույթներից, որոնք նրան դնում են արտոնյալ վիճակում: Միաժամանակ դրանից կտուժի բոլոր սեւծովյան երկրների անվտանգությունը, քանի որ միջազգագիրը նախատեսում է Սեւ ծով մտնող ռազմածովային ուժերի տոննաժի սահմանափակումներ:

Չնայած Թուրքիայի նախատեսած սահմանափակումներին, դրանց կանոնակարգը առայժմ լրիվ չի գործում (Թուրքիան փաստ է նեղուցներից օգտվող երկրներին «ընտելացնելու» հնարավորություն, աստիճանաբար սահմանափակումներ մտցնելով): Բայց Ռուսաստանի առեւտրական նավատորմն արդեն զգացել է դրանց հետեւանքները: 1994 թ. դրա նավերի ընդհանուր պարապուրդները կազմել են 40 օր: Դա համարժեք է 450 հազար տոննա նավթի կորստին, որը նավթալցանավերը կկարողանային փոխադրել Միջերկրական ծովի գլխավոր նավահանգիստներ: Բոսֆորի մուտքի մոտ խարսխակայաններում կանգնած նավերի թիվը 50-ից ավելի է, իսկ այս տարվա հունվարի 14-17-ը դրանց հեռավորությունը միմյանցից չէր անցնում մեկ կաբելտովից (185 մետր):



Միեւնույն ժամանակ, տրանսպորտի նախարարության ծովային գերատեսչության ղեկի առաջին տեղակալ Սերգեյ Պալեյկայի խոսքերով, Բոսֆորով եւ Դարդանելով անցման ապահովող տեխնիկական միջոցները բարեփոխման կարիք ունեն եւ զգալիորեն պետք է բարելավվեն: Երբ նեղուցներով անցնող 100-150 հազար տոննա ջրատարողությամբ նավթալցանավերում պարտադիր կարգով նավարկում են տեղացի լոցմաններ, ապա դա յուրաքանչյուր նավի հաշվով կհանգեցնի 5000 դոլար լրացուցիչ ծախսերի: Ուստի, Ռուսաստանի եւ Հունաստանի դիվանագիտությունները նեղուցներով անցնող խոշոր նավթալցանավերի նավապետներին հորդորում են չօգտվել նրանց ծառայություններից:

1994 թ. հուլիսի 1-ից մտցված սահմանափակումների հարցում Մոսկվայի դիվանագիտական ակտիվությունն անշուշտ մեծ է: Բացի նավագնացության անվտանգության միջազգային կոմիտեին Ռուսաստանի ԱԳՆ-ի կողմից դիմումներից (որոնց հետ համերաշխվել են ծովային գլխավոր տերությունները (ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա եւ Նորվեգիա), Թուրքիային հղվել են բողոքի մի շարք նոտաներ:

«Սեգոդնյա»

ՏԱՐԱԾՔ

Ֆոլկեր Ռյուե. «Կայունությունն անհնար է առանց Ռուսաստանի»

«Եվրոպայում կայունություն կարելի է հաստատել միայն Ռուսաստանի հետ միասին», երեքշաբթի օրը հայտարարել է Գերմանիայի պաշտպանության նախարար Ֆոլկեր Ռյուեն՝ ելույթ ունենալով Մյունխենում Բավարիայի գործարար շրջանակների ներկայացուցիչների առջեւ: Նա նշել է, որ Ռուսաստանի հետ ռազմավարական քաղաքական եւ տնտեսական համագործակցությունը բխում է Արեւմուտքի հեռագնա շահերից: Ռյուեն հույս է հայտնել, որ ՆԱՏՕ-ի եւ Ռուսաստանի միջեւ կկնքվի գործակցական հարաբերությունների մասին պայմանագիրը: «Դաշինքի ընդլայնումը եւ Ռուսաստանի հետ ռազմավարական գործընկերության զարգացումը զուգահեռ գործընթացներ են», հայտարարել է նախարարը, սակայն միաժամանակ ավելացրել, որ խաղաղության ամրապնդման գործում Մոսկվան կարող է գործընկեր լինել միայն այն դեպքում, երբ ինքը անհրաժեշտ նախապայմաններ ստեղծի դրա համար:

ՌԻԱ ՍՆԱՐՔ

Փենյանը ռուսաստանյան ռեակտորներ է ցանկանում

ԿԺԴՀ-ն պատրաստվում է ձեռք բերելու Ռուսաստանի արտադրության թեթեւ ջրով աշխատող միջուկային ռեակտորներ, չորեքշաբթի օրը Փենյանում նշել է հանրապետության վարչական խորհրդի փոխվարչապետ Հոն Սեն Նամը: Նա ընդունել է Ռուսաստանի Պրիմորիեի երկրամասի պատվիրակությանը: Ինչպես հաղորդել է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, Հոն Սեն Նամը նշել է, որ վերջին ժամանակներս ամերիկյան կողմը ակտիվորեն փորձում է ԿԺԴՀ-ին պարտադրել հարավկորեական տիպի ռեակտորներ, ինչը հանրապետության համար միանգամայն անընդունելի է: Միեւնույն ժամանակ, ասել է փոխվարչապետը, Ռուսաստանի հետ վաղեմի կապեր կան այս բնագավառում, երկու երկրներն ունեն առնչման շատ ընդհանուր կետեր:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ԱՄՆ. 34 մլրդ թերթերի գովազդներից

ԱՄՆ-ում անցած տարի գովազդներից ստացված եկամուտները կազմել են ավելի քան 34 միլիարդ դոլար՝ վերջին 8 տարվա ընթացքում ամենաբարձր ցուցանիշը, չորեքշաբթի օրը հայտնել է ամերիկյան թերթերի ասոցիացիան: Ինչպես հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, թերթերի գովազդների վրա կատարված ծախսերի աճը վկայում է այն մասին, որ երկրի էկոնոմիկան գտնվում է լավ վիճակում եւ որ գովազդատուները շարունակում են թերթերը համարել սպառողի վրա ազդելու ամենաարդյունավետ միջոցը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ԲԱՆԿԵՐ

Ֆրանսիացիները փրկում են «Կրեդի լիոնեն»

Որի վնասները կազմել են 12 մլրդ. դոլար

Բրիտանական «Բերինգս» բանկի սնանկացումից հետո աղետալի վիճակում է հայտնվել Ֆրանսիայի խոշորագույն պետական բանկը՝ «Կրեդի լիոնեն», որի ընդհանուր կորուստները վերջին տարիներին հասել են 12 մլրդ. դոլարի: «Սոսիետե ժեներալի» հետ մեկտեղ այն Ռուսաստանում մասնաճյուղեր ունեցող ֆրանսիական երկու բանկերից մեկն է:

Ամեն գնով բանկը պահպանելու նպատակով կառավարությունը փորձում է փակել ֆինանսական հսկա ճեղքվածքը: Փրկության չորսամյա ծրագրով նախատեսվում է զոհել ամենաարժեքավորը՝ 27 մլրդ. դոլարի հասնող բանկային ակտիվները, որոնք ընդգրկում են բանկին պատկանող անշարժ կայքը, արդյունաբերական խոշորագույն ձեռնարկությունների բաժնետոմսերը եւ այլն: Դրանք կհանձնվեն «Կրեդի լիոնեի» հատկապես ստեղծվող մասնաճյուղին, որը կզբաղվի դրանց վաճառքով: Բացի դրանից, 71 հազար բանկային աշխատողների մոտ 10 տոկոսը կկրճատվի: Կփակվեն բանկի բազմաթիվ արտասահմանյան բաժանմունքներ, որի հետեւանքով այն զգալի չափով կկորցնի միջազգային բնույթը: Մյուս էական կողմն այն է, որ խախտվել է ավանդատուների վստահությունը անխորտակելի թվացող այդ ֆինանսական հաստատության հանդեպ: Վերջապես մի քանի տարով հետաձգվում է բանկի ապազգայնացումը:

Այդուհանդերձ, ամեն ինչ արվեց, որ պետական հաճախորդների շահերը բնավ չտուժեն: «Կրեդի լիոնեի» փրկության մյուս առանձնահատկությունն այն է, որ պետությունն այդ գործում իր բյուջեից միջոցներ չի ներդնի, այլ կերպ ասած, չի ծախսի հարկատուների փողերը:

Այդուհանդերձ, «Կրեդի լիոնեն» ըստ երեւույթին կկորցնի կառավարության կարեւորագույն գործիքի դերը, որի միջոցով նա զգալի չափով վարում էր իր ֆինանսական ու տնտեսական քաղաքականությունը:

Ինչպես ընդգծում է նոր նախագահը՝ «Կրեդի լիոնեի» գլխավոր տնօրեն Ժան Իվ Աբերերը, աղետը տեղի է ունեցել այն պատճառով, որ բանկը վտանգավոր ֆինանսական գործառնություններ էր ձեռնարկում առանց իշխանությունների պատշաճ վերահսկողության: Խիստ անհաջող եղան անշարժ կայքի ձեռքբերման գործարքները, ինչպես նաեւ ամերիկյան հանրահայտ «Մետրո Գոլդվին Մեյեր» կինոընկերության գնումը, որի հետեւանքով բանկը կորցրեց մի քանի միլիարդ:

Բանկը խիստ անբարեհաջող կերպով էր ֆինանսավորում որոշ ձեռնարկատերերի, մասնավորապես Մարսելի «Օլիմպիկ» ֆուտբոլային ակումբի նախկին տիրոջ՝ Բեռնար Տապիի գործունեությունը, որը պարտք է մնացել հսկայական գումարներ: Բացի դրանից, աննախադեպ ճգնաժամը կապված է նաեւ զանազան ֆինանսական շահախարդախությունների հետ: Ուստի այժմ կսկսված է քննություն, որը պետք է պարզի տարբեր մեքենայությունների շնորհիվ հարստացած չարագործների անունները:

«Ֆինանսովիե իզվեստիա»
21 մարտ

ԱՄՆ. Հատուկ ծառայությունները հատուկ հսկողության տակ

ինթոնի վարչակազմը որոշում է նդունել ավելի մեծ հսկողություն սահմանել Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) եւ յուս գաղտնի գործակալությունների ձեռք բերած տեղեկությունների րա, հաղորդում է «Ինտերնեշնլ Հերալդ Տրիբյուն» թերթն իր մարտի 2-ի համարում:

Կոնգրեսական եւ կառավարական աղբյուրների համաձայն, առաջին անգամ նախագահի հրամանագրով ստեղծվել է բարձրագույն մակարդակի մի կոմիտե, որը ստուգելու է, թե արդյոք կատարվում են տեղեկությունների հավաքման գործում Սպիտակ տան ներկայացրած պահանջները: Պենտագոնի, Պետդեպարտամենտի եւ այլ պետական հիմնարկությունների պաշտոնական անձնավորություններից կազմված այդ նորաստեղծ կոմիտեն նաեւ հետապնդողականորեն հսկելու է, որ հետախուզական գործունեություններում առաջնությունը տրվի իրենց ներկայացրած օբյեկտների եւ անձնավորությունների ցուցակին, դրանով իսկ որոշ չափով սահմանափակելով ԿՀՎ-ի նախկինում ունեցած անկախությունն ու գործելու ազատությունը:

Կոնգրեսական աղբյուրներից պարզ է դառնում, որ կառավարության կողմից նշված հետախուզության նպատակ երկրների թվում են առաջին հերթին Իրաքը, Իրանը, Հյուսիսային Կորեան, իսկ գործով հարցերի թվում զանգվածային ոչնչացման զենքերը, ահաբեկչությունը եւ մահմեդական արմատականությունը: Տնտեսական հարցերն այդ ցուցակում գրավում են միջին, իսկ շրջակա միջավայրի, բնապահպանության եւ առողջապահական հարցերը վերջին տեղը:

Մինչեւ Խորհրդային Միության փլուզումը անհրաժեշտություն չկար, նշվում է հաղորդագրության մեջ, ստեղծելու նման մի կոմիտե, քանի որ սառը պատերազմի հետեւանքով ստեղծված փախի պայմաններում ԿՀՎ-ի կամ մյուս գործակալությունների առաջ դրված միասնական ծրագրի համար անհրաժեշտ գումարն ավանդաբար մեծ էր հատկացվել: Սակայն 1991-ից ի վեր իրադրությունը փոխվել է եւ այժմ այլ սկզբունքներով պետք է առաջնորդվել:

Չնայած հետախուզական գործակալություններում աշխատող ոչ բոլոր պաշտոնյաներն են գոհ նոր փոփոխություններից, պատճառաբանելով, որ կառավարական դիրեկտիվները չափազանց ընդհանուր բնույթ ունեն, զերծ են կոնկրետությունից եւ երբեմն դժվար է այս կամ այն հարցի առաջնահերթությունը ճշգրիտ որոշել, այնուամենայնիվ կառավարական հրամանագիրն արդեն ստորագրված է եւ օրենքի ուժ ստացած:

■ *Հիսուն տարի փակի տակ պահվելուց հետո Հիտլերի համազգեստն ու կոշիկները այժմ ցուցադրվում են Մոսկվայի ռազմական թանգարանում, հաղորդում է «Ինտերնեշնլ Հերալդ Տրիբյուն» թերթն իր մարտի 12-ի համարում: Ցուցադրման վերաբերյալ եղել են մի շարք առարկություններ, որոնցից մեկն այն որ եւս «հին չարի կյա» ներկայացնելն է եղել, իսկ մյուսը՝ «ճմռթված վիճակում գտնվեն նետված», բայց «այդպիսի նայքի ոչ մի թանգարան աշխարհում չի դիմի», ասել է թանգարանի տնօրեն գնդապետ Ալեքսանդր Նիկոնովը: Հիտլերի համազգեստն ու կոշիկները, Հերման Գյորինգի վերարկուն եւ նացիստական Գերմանիայից բերված մի շարք այլ իրեր ցուցադրության են արժանացել մայիսին նշելու համար Համաշխարհային երկրորդ պատերազմի հաղթական ավարտը:*

ՄՇԱԿՈՒՅԹ

«Հայ փոքրիկ երգիչներին» լսելու պատիվ կունենա՞ Բելգիայի թագուհին

Մայիս-հունիսին երգչախումբը աշխարհին կներկայանա, եթե...

1993-ին ծնունդ առած «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական երգչախումբը, որի գեղարվեստական ղեկավարը և գլխավոր դիրիժորը «Հայ փոքրիկ երգիչներ» միջազգային ասոցիացիայի նախագահ, բազմաթիվ միջազգային մրցույթների դափնեկիր, Հայաստանի ռադիոհեռուստատեսության երգչախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, Կոմիտասի կոնսերվատորիայի խմբավարական ֆակուլտետի դասախոս Տիգրան Հեքեքյանն է, բավականաչափ հայտնի անուն է ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհում («Ազգն» անցյալ տարի գրել էր երգչախմբի հաջողությունների մասին): «Հայ փոքրիկ երգիչները» Հայաստանում միջազգային միակ մանկական ասոցիացիան է և սերտ համագործակցության մեջ է «Աշխարհի փոքրիկ երգիչներ» կազմակերպության հետ, որի կենտրոնատեղին Փարիզում է, հովանավորվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից: Կազմակերպության պատվավոր նախագահը Մոնակոյի արքայազն Ռենյեն է: Կազմակերպությանը անձամբ հովանավորում է Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանը: Եվ նրա հովանավորությամբ 7 միլիոն է տրամադրվել Մորվանի շրջանում գտնվող բարձրադիր բլուրի վրա կազմակերպությանը ավելի շատ դղյակ հիշեցնող նոր շենք կառուցելու համար՝ ստեղծագործելու ողջ աշխարհի երեխաների աչքը միշտ շոյի հայրենի գեղեցկություններով: «Հայ փոքրիկ երգիչները» ապրում են տեղից տեղ թափառելով (չնայած հիմնադիրների թվում հեղինակավոր մարդիկ կան): «Պետության կողմից աջակցությունը քիչ է», դժգոհում է մաեստրո Հեքեքյանը: Ռադիոյի տարածքում (Տերյան-2) առանց վարձակալության այսօր ապաստանած «Հայ փոքրիկ երգիչները» ստեղծագործում են շինարարական փոշու և աղմուկի մթնոլորտում, բայց այս բնակելի շենքի՝ մեկ տարի առաջ բողոքի հետևանքով դադարեցված և այսօր արդեն շարունակվող շինարարություն է իրականացվում, որը շատերի համար ցանկալի [illegible] դառնալու հավանականություն չունի (ըստ որոշ աղբյուրների, շենքում պիտի բնակվեն բարձրաստիճան պաշտոնյաներ): Ինչևէ, բուն նյութից չշեղվելով ասեմ, որ բոլոր դժվարությունները չեն խոչընդոտում լուրջ աշխատելու համար: Եվ ուրախալի մի նորություն. «Հայ փոքրիկ երգիչները» մայիս-հունիսին օտարների կողմից հրավիրվել են մասնակցելու միջազգային խոշոր համերգային շրջագայության Եվրոպայում: «Խաղաղություն աշխարհին» վերնագրով այս ծրագիրը, որ ընդգծելու է պատերազմի նկատմամբ Հայաստանի վերաբերմունքը, ունի նաև խաղաղական նշանակություն: «Հայ երեխաները ընդդեմ ցեղասպանության և պատերազմի» խորագրով այս շրջագայությունը նվիրված է եղեռնի 80-ամյակին, ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի, ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի 50-ամյակներին, արդեն ստացել է վերջիններիս հաստատումը:

Զարմանալի, որ եղեռնի 80-ամյակին հիշատակող այս տարին մեր

յում, Կանադայում, ԱՄՆ-ում: Շրջագայության ընթացքում երգչախումբը կմասնակցի Հալլեի (Գերմանիա), Լիլի (Ֆրանսիա), Բազելի (Շվեյցարիա), Գայըն Գեյթի (ԱՄՆ) միջազգային փառատոներին ու մրցույթներին, համերգներով հանդես կգա Լեհաստանում, Գերմանիայում, Բելգիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Կանադայում, ԱՄՆ-ում: Մանկական երգչախմբին լսելու ցանկություն է հայտնել Բելգիայի թագուհին: «Հայ փոքրիկ երգիչները» հանդես են գալու ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանների համերգասրահներում: Չի բացառվում, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1300 տեղանոց համերգասրահում երեխաները ելույթ կունենան Շառլ Ազնավուրի հարևանների առաջարկով ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հռչակվել է իբրև հանդուրժողականության տարի: Քաղաքակիրթ աշխարհին բարձրաձայնորեն այս երգչախմբով ներկայանալու առիթը բաց չթողնելու համար երգչախմբի ղեկավարը դիմել է հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաներին՝ ընդամենը 30000 ամերիկյան դոլար արժողությամբ ճանապարհածախսը հոգալու նպատակով: Կա նաև մեկ տարբերակ ավելի դյուրին՝ միջնորդել Հայկական ավիաուղիներին Երևան-Վարշավա և Լոս Անջելես-Երևան անվճար չվերթի համար: Հուսանք, որ պետական այրերը ըմբռնումով կմոտենան:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱԹԵՆՔ

Ջուլիետա Գալստյանը «Մարիա Կալլասի» առաջին մրցանակակիր

ԵՐԵՎԱՆ, 23 ՄԱՐՏ, ՍՆԱՐՔ: Հայաստանցի երգչուհի Ջուլիետա Գալստյանը դարձել է օրերս Հունաստանի մայրաքաղաքում ավարտված վոկալիստների Մարիա Կալլասի անվան միջազգային մրցույթի դափնեկիր:

Երևանի Կոմիտասի պետական կոնսերվատորիայի հինգերորդ կուրսի 23 ամյա ուսանողուհին առաջինից երրորդ տեղերն է բաժանել համաշխարհային ճանաչում վայելող այդ մրցույթում: Իսկ մինչ այդ նա հաղթել էր Երևանում՝ Կոմիտասի ծննդյան 125-ամյակին նվիրված մրցույթում:

Ջուլիետա Գալստյանին Աթենքի հաղթարշավի ընթացքում բազմիցս հարցնում էին, թե ինքը որտեղ է ուսումնասիրել կատարողական արվեստը՝ Իտալիայու՞մ, թե ԱՄՆ-ում: Անտեղյակ մարդիկ ապշում էին՝ լսելով, որ Հայաստանում կան Ջուլիետայի նման տաղանդներ:

ԵՐԵՎԱՆ

Գևորգ Քոչարի արխիվը Երևանում

Վերջերս Հայ ճարտարապետության ազգային թանգարանի ավագ գիտաշխատող Իրեն Երզնկյանի ջանքերով թանգարանը Մոսկվայից ստացավ մեծավաստակ ճարտարապետ Գևորգ Քոչարի արխիվը, որն ամփոփում է նրա քաղաքաշինական նախագծերը, գիտատեսական նյութեր, անձնական իրեր և այլն: Երեկ մեզ հաղորդեցին ՀՃԱՄ-ի լրատվական ծառայությունից: Գևորգ Քոչարի հեղինակած ստեղծագործություններից են «Մոսկվա» կինոթատրոնը, ՊԱԿ-ի շենքը, Ստանիսլավսկու անվան թատրոնի շենքը, հարակից սպորտկոմպլեքսի կառույցը, գրողների հանգստյան տունը Սևանում և այլ կառույցներ հանրապետությունում և նրանից դուրս: Օրերս թանգարանը ձեռնամուխ է եղել ստանալու վաստակաշատ ճարտարապետներ Լևոն Բաբայանի և Պետրոս Թամանյանի ստեղծագործությունների հավաքածուները:

ԳՅՈՒՄՐԻ

ԺԻԱ-ն նաև «ֆրանսիական» դպրոց է կառուցում

Թեև շարունակում է տնակային պայմաններում գործել Գյումրիի Արսեն Պետրոսյանի անվան ֆրանսերենի խորացված ուսուցմամբ միջնակարգ դպրոցը, սակայն նրա 1087 սաներն ու մանկավարժական կոլեկտիվը հույս ունեն արդեն գալիք ուստարում դպրոցամուտները նշել նոր, իսկական դպրոցական շենքում: Ավերիչ երկրաշարժի ժամանակ փլուզված և մեծ կորուստներ տված այս կրթօջախի համալիրի շինարարությունը իրականացվում է ֆրանսիական կառավարության և Ֆրանսիայի միջմասնագիտական խմբավորման (ԺԻԱ) միջոցներով: Շինարարության առաջին փուլում կկառուցվեն երկու ուսումնական մասնաշենքեր, դահլիճ ու վարչական մաս: Առայժմ բարձրացվել է երկհարկ առաջին մասնաշենքի հիմնակմախքը, ավարտվել են երկրորդի նկուղային հարկի աշխատանքները:

Այսօր շատերին ծանոթ այս դպրոցում աշակերտներին կայուն գիտելիքներ են հաղորդում զուգահեռաբար մայրենի լեզվից և ֆրանսերենից: Սպասվում է, որ սեպտեմբերից այստեղ կօգտագործվեն նաև Ֆրանսիայում տպագրված դասագրքեր:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

ԾՈՒԾԱՀԱՆԴԵՍ

Վաչեի գծանկարները ցուցադրվում են Փարիզում

Մարտի 8-18-ը Փարիզի «Լե Սան» պատկերասրահում ցուցադրվել են Վաչեի կտավները, տեղեկացնում է «Յառաջ» օրաթերթը՝ իր վերջին համարներից մեկում: Երիտասարդ այս արվեստագետը ծնվել է 1960-ին, Բեյրութում: 1976-ից ապրում է Փարիզում: Այս ցուցահանդեսը բաղկացած է նրա վերջին շրջանի գործերից (շատ են գծանկարները): «Երբեք նկարչական գործիք չեմ կրում, բայց չկա օր՝ առանց գծելու: Գծերը ուժականություն են պարունակում, ողորկ են, նուրբ կամ կոշտ, ինչպես օդի թրթիռը կամ պաղ ջրում լողացող մարմնի շրջագծերի սուր զգացողությունը», ասում է նկարիչը:

ԲԵՌԼԻՆ

Մանգելսդորֆը ջազ փառատոնի ղեկավար

Գերմանացի հանրաճանաչ ջազմեն Ալբերտ Մանգելսդորֆը, որին տրոմբոնի Պագանինին են ասում, նշանակվել է բեռլինյան ջազ-փառատոնի ղեկավար: 66-ամյա Մանգելսդորֆը բարեհամբույր է, համեստ, աշխատասեր, հեռու սկանդալներից, այսինքն՝ այնքան էլ նման չէ «աստղի» ընդունված պատկերացմանը: Ջազային այս երաժիշտ կատարողին դիպուկ անվամբ են մկրտել՝ արքա կամ տրոմբոնի Պագանինի: Նա տիրապետում է անսովոր ու անկրկնելի երաժշտական տեխնիկայի: Մանգելսդորֆն իսկական մարդ նվագախումբ է: Նույնիսկ ամենաբարձր նոտերի կատարման ժամանակ նա հասնում է ձայնի բյուրեղյա մաքրության: Այդպիսի բազմաձայնություն և [illegible] դժվար թե ունենա մեկ ուրիշ մենակատար: Մանուկ հասակում Մանգելսդորֆը սովորել է ջութակ նվագել: Բայց նրան ջազն ավելի գրավեց, քան Մոցարտը կամ Բեթհովենը: Ամերիկյան ջազ խմբերը, որոնք հետպատերազմյան շրջանում փորձեր էին անում և հանդես գալիս հայրենի Մայնի Ֆրանկֆուրտում, Մանգելսդորֆի համար բախտորոշ նշանակություն ունեցան: Երբ այդ խմբերից մեկում տրոմբոնի թափուր տեղ հայտնվեց, Մանգելսդորֆը ջութակը փոխարինեց տրոմբոնով, որին հավատարիմ է մինչև օրս: Այսօր նա ջազի գերմանացի նշանավոր վարպետներից է, բազմաթիվ մրցանակներ շահած ու հանրության սերը նվաճած: Հեղինակել է բազմաթիվ ալբոմներ: Կանոնավոր կերպով համերգներ է տալիս և երաժշտական սեմինարներ վարում: Ուրեմն զարմանալի չէ, որ հենց նրան են ընտրել բեռլինյան ջազ-փառատոնի ղեկավար:



ՀԱՄԱՌՈՏ

Կտավներից մեկը՝ ձնհալի զոհ

Հայաստանի Ազգային պատկերասրահում Հովնաթանյանների դպրոցի անհայտ նկարչի մի կտավ վերջերս վնասվել է ցուցասրահում ձնհալից առաջացած կաթոցներից: Բարեբախտաբար, նկարը շատ չի տուժել և այժմ գտնվում է պատկերասրահի վերականգնողական բաժնում:

ՆՏ

Նկարները վերականգնվում են

Հայաստանի Ազգային պատկերասրահի վերականգնման բաժնում, չնայած խոստացված պետական ֆինանսավորման ուշացմանը, կշարունակվեն երկու տարի առաջ պատկերասրահի՝ Դիլիջանի մասնաճյուղից առևանգված երեք կտավների վերականգնման աշխատանքները: Այնուամենայնիվ երկու կտավները կրկին ցուցադրության պատրաստ կլինեն այս տարվա ամռանը: Երրորդ կտավը, որ եվրոպացի նկարչի աշխատանքն է, պատրաստ կլինի ավելի ուշ:

ՆՏ

Նոր մրցանակ՝ Պետեր Շտայնին

Թատրոնի նշանավոր ռեժիսորներից մեկին՝ գերմանացի Պետեր Շտայնին Պալերմոյում հանձնվել է «Պրեմիեր Եվրոպեեն» մրցանակը՝ ի նշան նրա վաստակի ճանաչման: Ոսկե վարդի տեսքով այս մրցանակը սահմանված է «Նովել ժենսո» հրատարակչության կողմից:

ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐ

Դիրիժոր Քրիստոֆ Էշենբախի նոր հաջողությունները



54-ամյա դաշնակահար և դիրիժոր Քրիստոֆ Էշենբախին գերմանական երաժշտական մշակույթի դեսպան են համարում: Նրա ղեկավարած Հյուսթոնի սիմֆոնիկ նվագախումբը ԱՄՆ-ում լավագույններից է համարվել: Վերջերս Բամբերգի սիմֆոնիկ նվագախմբով Էշենբախը շրջագայել է Ռիո դե Ժանեյրոյում և Սան Պաուլոյում, որտեղ Յոհան Բրամսի և Գուստավ Մալերի ստեղծագործությունների նրանց կատարումը հոտնկայս ծափողջույններով է ողջունվել:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Կազմակերպությանն անհրաժեշտ է գլխավոր հաշվապահ: Դիմել մինչև 40 տարեկան, աշխատանքի փորձ ունեցող կանայք:
Հասցեն՝ Արշակունյաց պ. 2, առաջին հարկ:
Հեռ. 56-58-22

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
1. Կոշիկի կաղապարների արտադրության հաստոցներ (Իտալիա)-3 հատ:
2. Գուլպայի արտադրության հաստոցներ 03DC (ՌԴ)-7 հատ:
3. Դիզել գեներատոր 8 կ/վ հզորության (ՌԴ)-1 հատ:
Հեռախոս 52-22-43

ՎՈԼԵՅԲՈԼ

Ռայիկ Ղուկասյան. «Մարզաձեւը մեռնում է, հեռանկարը՝ նույնպես»

ՅՈՒՐԻ ՍԱՀԱԿՅԱՆ.

Ռայիկ Ղուկասյանը Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի ֆիզդաստիարակության ամբիոնի վարիչն է, մանկ. գիտությունների թեկնածու, դոցենտ, վոլեյբոլի միջազգային կարգի մրցավար, վաստակավոր մարզիչ, հանրապետության վոլեյբոլի ֆեդերացիայի նախագահը:

— Մարզաձեւը հանրապետությունում վատ վիճակում է եւ միջազգային ասպարեզներում առաջընթացի հեռանկարներն աննշան:

— 1992-ից հանրապետության վոլեյբոլի հավաքականը, ինքնուրույն նախապատրաստվող, ինքնակառավարվող ֆեդերացիան ընդունվեց համաշխարհային ֆեդերացիայի մեջ: 94-ի նոյեմբերի 26-27-ին կանանց հավաքականը Վիեննայում 1-ին անգամ մասնակցեց Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարին (2 հանդիպում 2 պարտություն): Տղամարդկանց թիմը չայցելեց Իսրայել (անհրաժեշտ 5 հազարի դիմաց ունեինք 2 հազար դոլար): Իսկ անակնկալը չսպասված Եվրոպական կոնֆեդերացիան որոշեց տուգանել 8 հազար դոլարով: Կազմակերպիչները «ելնելով հանրապետության վիճակից» շատ էին մտահոգ մեր մասնակիցների անվտանգությամբ եւ Երեւանում խաղեր չնշանակեցին:

— Ի՞նչ հույսեր կան:

— Երեւանում գործում է մի քանի ակումբ. 92-ից «Հայքը», 94-ից «Վանը» (վերջինս «Հայկասպէին» տեսակի կառավարիչ Ղազարյանի նախաձեռնությամբ է ծնունդ առել). «Նաիրիտը» վաղուց է գործում, նույնատիպ վիճակում է: Առաջնություններին լավ են մասնակցում թիվ 1 բժշկական ուսումնարանի, Սիսիանի, Աբովյանի, Վայքի, Արմավիրի եւ ուրիշ թիմեր: Ավանդույթներ ունեցող մի շարք քաղաքներ ու շրջաններ վերջին 2 տարում ոչ մի թիմ չեն բերել (Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Իջեւան, Տաշիր): Հաճախ միջոցներ չունենալու պատճառով են նրանք զրկվում մրցումներից, մարզաձեւը մեռնում է, հեռանկարը՝ նույնպես:

— Սպորտվարչության բակում լավ մարզադաշտ կար ու մարզական ոգի:

— Այժմ այն ծածկված է ավտոտնակներով: Այդ դաշտի վերացմամբ կարծես վերացավ մարզաձեւը. դրան «նպաստեց» «բաց» դաշտերից «փակի» անցնելու (դահլիճ) որոշումը: Բակերում անհրաժեշտ է վերակենդանացնել մարզաձեւը, վերականգնել ավանդույթները:



Ռայիկ Ղուկասյանը (աջից)

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

Նույնիսկ մահացած կուռքը բարի գործ է կատարում

Մարտի 22-ին վրդովված մարզասերների ամբոխը ներխուժել է Սան Պաուլոյի գերեզմանոց, որտեղ թաղված է «Ֆորմուլա 1» ավտոմրցարշավի աշխարհի եռակի չեմպիոն, բրազիլական սպորտի կուռք Այրտոն Սեննան, որը մրցումների ժամանակ զոհվել է անցած տարվա մայիսի 1-ին: Բրազիլիայի բիզնեսմեններն ու ձեռնարկատերերը չեմպիոնի անվան մի ֆոնդով 700 հազար ամերիկյան դոլարի շահույթ են ստացել, որը նրանք պատրաստվում են բաշխել Սան Պաուլոյի անտերունչ երեխաներին: Այսպես, բրազիլացիների նույնիսկ մահացած կուռքը բարի գործ է կատարել: Կիրակի օրը տեղի կունենա բրազիլիայի «Մեծ մրցանակի» խաղարկությունը «Ֆորմուլա 1» դասի ավտոմրցավազքի 1995 թվականի աշխարհի առաջնության հերթական փուլը, որն առաջինն է առանց Սեննայի մասնակցության:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Ներկայացնում ենք մասնակից թիմերին
ՀԱՄՍ ԵՐԵՎԱՆ

Թիմը հիմնադրվել է 1992 թ.:
Մարզագծեսը՝ Նարեքացու կառույց-կարմիր:
Խաղերը անցկացնելու է «Նաիրի» մարզադաշտում (7000 նստատեղ):
Նվաճումները՝ ՀՀ չեմպիոն 1992 թ., արծաթե մեդալակիր՝ 1994 թ.:
ՀՀ առաջնություններում. 1992 թ. (Բարձր. խումբ)՝ 34 +25=5-4 108-45
1993 թ. (Բարձր. խումբ)՝ 28 +21=3-4 80-29
1994 թ. (Բարձր. խումբ)՝ 28 +23=1-4, 113-24
Ամենախոշոր հաղթանակը՝ ՀԱՄՍ-«Կիլիկիա» (Երեւան)՝ 12-1 (1992 թ.):
Ամենախոշոր պարտությունը՝ «Բանանց»-ՀԱՄՍ՝ 7-2 (1993 թ.):
Բարձրագույն խմբում բոլորից շատ խաղեր անցկացրել են Ա. Գալստյանը, Ա. Ավետիսյանը, Վ. Ավետիսյանը՝ 84 ական:
Թիմի լավագույն ռմբարկուն՝ Ա. Ավետիսյան՝ 74 գնդակ:

Անուն, ազգանուն	Ծննդյան թիվը	Հասակ/ քաշ	Ակումբ(ներ)ը	Խաղ (գոլ)
Արթուր Ավագյան	27.11.68	1.72/70	ՀԱՄՍ	70(-64)
Կարեն Բաբայան	5.10.77	1.68/60	-	-
Արմեն Գալստյան	2.02.72	1.67/63	ՀԱՄՍ	84
Սարգիս Հովսեփյան	2.11.72	1.82/78	ՀԱՄՍ	83(4)
Արթուր Ասոյան	3.12.70	1.72/70	«Կիլիկիա», ՀԱՄՍ	72(3)
Արմեն Մարտիրոսյան	20.02.72	1.71/68	ՀԱՄՍ	51(1)
Արթուր Մկրտչյան	9.08.73	1.80/74	«Նաիրիտ»	85(2)
Վարդան Մինասյան	7.01.74	1.74/70	ՀԱՄՍ	75(9)
Հայկ Մարգարյան	4.08.72	1.73/70	ՀԱՄՍ	80(33)
Սեյրան Պողոսյան	19.06.70	1.72/69	«Կիլիկիա», ՀԱՄՍ	70(11)
Անդրանիկ Ջանազանյան	23.11.74	1.80/75	«Կիլիկիա», «Կանազ», «Կոտայք»	59(6)
Ռոմիկ Խաչատրյան	23.08.78	1.65/64	ԲՄՄ Արայի	11(2)
Արկադի Կնյազյան	13.01.74	1.70/66	ԲՄՄ Արայի	58(1)
Գեղամ Հովհաննիսյան	21.08.67	1.73/72	«Վան», ՀԱՄՍ	82(76)
Արսեն Ավետիսյան	8.10.73	1.70/65	ՀԱՄՍ	84(74)
Արտավազդ Բաբայան	5.10.77	1.68/60	-	-

Ակումբի նախագահ՝ Գագիկ Սաֆարյան:
Գլխավոր մարզիչ՝ Լեւոն Յաքուպյան:
Մարզիչ՝ Գեւորգ Պառոյան:
Ծանոթություն. Տվյալները բուն նախորդ երեք առաջնությունների

ՖՈՒՏԲՈԼ

Կրուիֆը հեռանո՞ւմ է «Բարսելոնից»

Դեռ այս ամսվա սկզբից իտալական թերթերը աղմուկ են բարձրացրել այն մասին, որ Յոհան Կրուիֆը ցանկանում է հեռանալ «Բարսելոնից»:

Հոլանդական De Telegraf օրաթերթին տված հարցազրույցում Կրուիֆը հաստատել է այդ լուրը եւ ասել, թե «95 տոկոսով համոզված է, որ մինչեւ տարեվերջ պետք է թողնի «Բարսելոնը»»: Իր նման քայլը նա բացատրել է նրանով, որ ակումբում կան մարդիկ, որոնք թույլ են տալիս, որ իշխանության ձգտող մի խումբ օգտագործի իրենց:

«Ակումբում չկա միասնություն: Այս շաբաթ ես ցանկանում էի միավորել բոլորին, քանի որ խաղալու էինք Փարիզում (հարցազրույցը տպագրվել է մինչեւ Չեմպիոնների լիգայում «Պարի Սեն Ժերմեն» - «Բարսելոն» պատասխան խաղը): Սակայն ես հանդիպում եմ մի գործելակերպի, որի նպատակը իմ ճանապարհին արգելքներ դնելն է: Ես սիրում եմ իմ գործը, ես շատ լավ եմ աշխատում Բարսելոնում, բայց ուզում եմ թողնել ամեն ինչ, իսկ նրանք թող փնտրեն ուրիշ մարզիչ»:

Հայտնի է, որ վերջին ժամանակներս «Բարսելոնը» աննախադեպ անկում է ապրում, անհաջող հանդես գալով եւ Իսպանիայի առաջնությունում, եւ Չեմպիոնների լիգայում, ուր դուրս է մնացել հետագա պայքարից: Եւ թիմի գլխավոր մարզչի վերոհիշյալ հարցազրույցը թերեւս ինչ-որ չափով լուսաբանում է նման անկման պատճառները:

ՇԱԽՄԱՏ

Կամսկին կրկնակի չեմպիոն դառնալ չի կարող

Լաս Պալմասում ժամկետից շուտ ավարտվեց պրոֆեսիոնալ շախմատիստների ասոցիացիայի վարկածով աշխարհի չեմպիոնի կոչման հավակնորդների եզրափակիչ մրցախաղը: Վիշվանաթան Անանդը նախավերջին 11-րդ պարտիայում կրկին պարտության մատնեց Գատա Կամսկուն, հաշիվը դարձավ 6,5:4,5, եւ նախատեսված հանդիպումներից վերջինը անցկացնելու անհրաժեշտությունը վերացավ:

Այսպիսով, Անանդը իրավունք ստացավ այս տարվա սեպտեմբերի 10-ից Գարրի Կասպարովի հետ Քյոլնում վիճարկել համաշխարհային գահը: Փոքր ինչ ավելի ուշ, նոյեմբերին, Հարավսլավիայում Կարպովն ու Կամսկին կվիճարկեն ՖԻԴԵ-ի գծով աշխարհի չեմպիոնի կոչումը: Իսկ եկող տարվա ամռանը երկրագնդի բացարձակ չեմպիոնին որոշելու համար կհանդիպեն Կասպարով-Անանդ եւ Կարպով-Կամսկի մենամարտերի հաղթողները:

Վ.ԱՆԱՆԴ-Գ.ԿԱՄՍԿԻ
Հավակնորդների մրցախաղ
9-րդ պարտիա
Լաս Պալմաս, 1995

1. e4 e5 2. Ձf3 Ձc6 3. Փb5 a6 4. Փa4 Ձf6 5. 0-0 Փe7 6. Նe1 b5 7. Փb3 d6 8. c3 0-0 9. h3 Փb7 10. d4 Նe8 11. Ձbd2 Փf8 12. a4 h6 13. Փc2 ed 14. cd Ձb4 15. Փb1 Թd7 16. b3 g6 17. Փb2 Փg7 18. Թc1 Նac8 19. Փc3 c5 20. d5 Թe7 21. Ձf1 Ձh7 22. Փ:g7 Ա:g7 23. Ձe3 h5 24. Թd2 Աg8 25. ab ab 26. Ձd1 Ձa6 27. Ձc3 b4 28. Ձb5 Ձc7 29. Փd3 Ձ:b5 30. Փ:b5 Նed8 31. Փc4 Ձf6 32. Թh6 Թf8 33. Թg5 Թg7 34. Նa7 Նc7 35. Փa6 Նb8 36. e5 Ձe8 37. Ն:b7 Նc:b7 38. Փ:b7 Ն:b7 39. Թd8 Թf8 40. Նa1 Ձc7 41. Թd7 Թb8 42. Թ:d6 c4 43. bc b3 44. Նb1 b2 45. Թc5 Նb3 46. Թd4 Թb4 47. Ձg5 Նc3



48. Թf4 f6 49. ef Ձ:d5 50. f7+, սեւերը հանձնվեցին:

Շախմատային օլիմպիադայի խորհրդանշանի եւ ազդականշի մրցույթ

Շախմատի 32-րդ համաշխարհային օլիմպիադայի եւ ՖԻԴԵ-ի 67-րդ կոնգրեսի կազմակերպական կոմիտեն հայտարարում է մրցույթ Երեւանում 1996 թ. անցկացվելիք համաշխարհային օլիմպիադայի ու կոնգրեսի խորհրդանշանի (էմբլեմի) եւ երաժշտական ազդականշի ստեղծման համար:
Մրցույթում լավագույնը ճանաչված խորհրդանշանի եւ ազդականշի հեղինակների համար սահմանվում է 1-ական մրցանակ՝ 300 ամերիկյան դոլարին համարժեք դրամի չափով:
Աշխատանքները մինչեւ 1995 թ. ապրիլի 10-ը պետք է ներկայացնել հետեւյալ հասցեով. Երեւան, Խանջյան 50, շախմատի համաշխարհային օլիմպիադայի կազմկոմիտեին:

Հեռ. 55-49-23

Համաշխարհային օլիմպիադայի կազմկոմիտե

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի նարդու ազգային ֆեդերացիան 1995 թվի նարդու կարճ (դամի) չափից աշխարհի Մոնտե-Կառլոյի առաջնությանը մասնակից թիմ կազմելու համար Երեւանի Նորքի «[illegible]» [illegible] մարտի 25-ից անցկացնելու է վեց նախնական մրցափուլեր. յուրաքանչյուր ամեն մասնակցի համար 10000 դրամ մուտքավճարով կանխիկ կամ փոխանցումով: Մրցաշարերում առաջին հինգ տեղը գրաված մարզիկները եզրափակիչ փուլում կազմեն Հայաստանի թիմի առաջնային 6 անդամին:

Մասնակիցների գրանցումը Երեւանի Շախմատիստի տանը մինչեւ մարտի 24-ը ժամը 11-ից 18-ը:
Մասնակիցների թիվն անսահմանափակ է:
Հովանավորները փոխանցումը կարող են կատարել ԲԱԲ «ԱՐԵԳԻՏ-ԵՐԵՎԱՆ» կոդ 759, հաշիվ 700208 ՀՆԱՖ-ին:

Ֆոտո «Էրեբունի»

Ֆոտո «Էրեբունի» փոքր ձեռնարկությունն առաջարկում է ամեն տեսակի ֆոտո ծառայություններ արտասահմանյան հանրահայտ KODAK, AGFA, KONIKA ֆիրմաների թղթերի եւ ժապավենների վրա:

ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՆՔ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՈՐԱԿ

Կարող եք պատվիրել նաեւ հարսանյաց հանդեսի «VIDEO» նկարահանումներ:
Զանգահարել 55-74-65:

Հասցեն՝ Երեւան, Դիմիտրովի 78ա.
«Էրեբունի» շուկայի մոտ

AGFA Kodak Konica Canon FUJI FILM

ԲՈՒՀ

Մեթոդական ուղեցույց հայոց լեզվի քննությանը նախապատրաստվողների համար

1. 1995-1996 ուս. տարվա բուհական ընդունելության քննությունը հայոց լեզվից կազմակերպվելու է հարցարանների եղանակով:

ՀՀ բարձրագույն կրթության և գիտության նախարարության նման որոշում ընդունելու նպատակն է դիմորդին առավելագույն հնարավորություն տալ դրսևորելու հայոց լեզվից ամբողջական գիտելիքներ:

2. Քննության նոր եղանակի բնորոշ գծերից մեկն այն է, որ շեշտը գլխավորապես դրվում է նյութի ոչ թե տեսական, այլ գործնական իմացության վրա: Նկատենք, որ ավելի համակողմանիորեն է ստուգվում դիմորդի գիտելիքները հայոց լեզվից:

3. Հարցաթերթիկները սահմանափակվում են ՀՀ դպրոցներում 4-8-րդ դասարանների դասագրքերով ուսուցանվող գիտելիքներով: Հետևաբար, քննության պատրաստվելիս պետք է օգտվել դպրոցական գործող դասագրքերից: Հանձնարարելի են նաև լուսավորության կողմից երաշխավորված կամ նրա ծրագրերի հիման վրա կազմված օժանդակ ձեռնարկներ:

4. Հարցաթերթիկներն ընդգրկում են հայոց լեզվի հետևյալ բաժինները.

ա) Ուղղագրություն (լրացնել բաց թողնված տառերը):

բ) Բառակազմություն (կազմել նոր բառեր՝ ըստ առաջադրանքի):

գ) Բառագիտություն (որոշել իմաստով մոտ և իմաստով հակառակ բառերը, դրսևորել բառապաշարի իմացության գիտելիքներ):

դ) Իմաստաբանություն և ձևաբանություն (խոսքի մեջ ճիշտ ձևով կամ իմաստով գործածել տրված բառերը):

ե) Շարահյուսություն (ճիշտ կապակցել նախադասությունները, տրված նախադասությունը փոխակերպել՝ կազմելով նույն բովանդակությամբ, բայց որոշ հատկանիշով տարբերվող մեկ այլ նախադասություն: Ասենք, ժխտականը դարձնել հաստատական, ներգործականը՝ կրավորական, ուրիշի ուղղակի խոսքը՝ անուղղակի խոսքով նախադասություն:

5. Ուղղագրական և կետադրական բնույթի առաջադրանքները ներկայացված են դասական կամ օրինակելի գրականության նմուշների օգնությամբ:

6. Յուրաքանչյուր հարցաթերթիկ բաղկացած է 6 հարցախմբից: Երեքը բառագիտության, երեքը խոսքի (նախադասության) վերաբերյալ:

7. Հարցախմբերը կազմված են ենթահարցերից, որոնք համարվում են իմաստային միավոր:

8. Հարցախմբերից 4-ը (1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ) ունեն 6-ական, իսկ երկուսը՝ 3-րդն ու 6-րդը՝ 8-ական ենթահարց:

9. Ենթահարցերը առաջադրվում են մեկական խնդրի և պահանջում մեկական պատասխան: Եվ առանձնահատուկ են այն դեպքերը, երբ առկա են նույն խոսքույթի մեկից ավելի ուղղագրություններ (օր., ամբարտավան բառում բաց է թողնված մ տառը ստուգելու համար, թե դիմորդը գիտի արդյոք բառի ուղղագրությունը: Իսկ մյուս բառի դեպքում բաց են թողնված ր և ռ տառերը, քանի որ երկուսը միաժամանակ վերաբերում են ուղղագրական մեկ երևույթի: Ուրիշի ուղղակի խոսքի կետադրության իմացությունը ստուգելիս, նույն սկզբունքից ելնելով, անհրաժեշտ է համապատասխան կետադրում կատարել:

10. Պատասխանները գնահատվելու են 20 միավորանոց համակարգով: Սխալների քննության ժամանակ միավորները հաշվարկելու արդեն գործող համակարգը պահպանվելու է որոշ բարեփոխումներով ու ճշգրտումներով:

11. Ենթահարցերին սխալ պատասխանելիս դիմորդը կորցնում է նախատեսված քանակի միավոր:

12. Ուշադրություն ենք հրավիրում հետևյալի վրա. գնահատելիս նկատի են առնվում ոչ միայն առաջադրանքների պատասխանները, այլև անսխալ արտագրելը: Կետադրական, ուղղագրական, այդ թվում տառադարձի սխալների, նաև բացթողումների համար դիմորդը համապատասխան քանակի միավոր է կորցնում:

13. Քննությանը լավագույնս նախապատրաստվելուն կարող են շատ օգնել «Հայոց լեզվի գրավոր աշխատանքների հարցաթերթիկների նմուշների» ժողովածուն (առաջադրանքներ և պատասխաններ), որ կազմել է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության միացյալ հանձնախումբը:

Մայիսի վերջին նախատեսվում է հրատարակել հայոց լեզվի քննության նյութերի ամբողջական ժողովածուն, որի բաժանորդագրության համար անհրաժեշտ է դիմել լեզվի պետական տեսչություն կամ նրա գործակալներին:

14. Մայիսին լույս կտեսնի հայոց լեզվի քննության հարցաթերթիկների ամբողջական ժողովածուն, որն ունենալու համար անհրաժեշտ է բաժանորդագրվել:

Կազմեց
ԱՐՍԵՆ ԳԼՉՅԱՆԸ
Բանասիրական գիտ. թեկնածու
Լեզվի պետական տեսչության

ԵՎԱ

«ԵՎԱ» ուսումնական կենտրոնը հրավիրում է
ձեզ 15-25-ամյա դասընթացների
հետևյալ մասնագիտությունների գծով

- Համակարգչային ուսուցում IBM PC համակարգիչների վրա՝ հետևյալ բաժիններում
- - օպերատորական գործ (MS DOS, NORTON, WINDOWS, տեքստային և գրաֆիկական խմբագրիչներ)
- - տվյալների բազաներ
- - ծրագրավորման լեզուներ
- անգլերեն լեզու
- բանկային գործ և համակարգիչների կիրառումը բանկերում
- հաշվապահության և համակարգիչների կիրառումը հաշվապահության մեջ
- կոմեդիկա և նկարչություն
- մերսում (մասսաժ)

Ավարտողներին տրվում են վկայականներ (սերտիֆիկատ) հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Ընդունելությունը՝ ամեն օր, ժ. 13.00-ից 16.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Հասցեն՝ Սարյան 4 (Մ. Սարյանի տուն-թանգարանի դիմաց)
Հեռ. 58-21-22 (ժ. 13.00-ից 16.00-ը) և 58-58-71 (շուրջօրյա):

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Զորս սենյականոց
տուն տնամերձ
հողամասով (200 քմ)
և օժանդակ
կառույցներով:
Հասցեն՝ Քանաքեռ,
Կամոյի փող.,
1 նրբանցք թիվ 2
(անմիջապես Քանաքեռի սկիզբը),
Հեռ.՝ 285873

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

երկու առանձնատուն,
250 քմ ընդհանուր
տնամերձ հողամասով
«Զվարթնոց»
կինոթատրոնի մոտակայքում:

Զանգահարել 58-33-26, 25-25-38

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ

ARMINCO

ARMINCO
համակարգչային ցանցը
Ձեզ հնարավորություն է տալիս ինֆորմացիա
փոխանակել 20 միլիոնից ավելի՝
INTERNET, BITNET, Compuserve, MCI-mail,
AMERICA-ONLINE, SPRINT, AT&T
և շատ այլ ցանցերի օգտվողների հետ:

ARMINCO-ն
ապահովում է հուսալի կապ
RELCOM, IASNET, SOVAM-TELEPORT ROSPAC
և նախկին ԽՍՀՄ մնացած բոլոր ցանցերի հետ:

Ձեր էլեկտրոնային նամակը, ֆաքսը, տելեքսը,
հեռագիրը
կհասցվի մեր մոլորակի ցանկացած կետ մի
քանի րոպեում՝ առանց աղավաղումների:

ARMINCO
- Հայաստանում INTERNET-ի պաշտոնական մատակարար
- SOVAM-TELEPORT-ի Խույլուցիվ ներկայացուցիչ
- IASNET-ROSPAC ցանցի ռեգիոնալ կենտրոն Հայաստանում

Մեր հասցեն՝
Իսահակյան փ. 28, 3 հարկ, հեռ.՝ 52.63.26,
ֆաքս.՝ 28.50.82, e-mail՝ support arminco. com

SARTARABAD Co. LTD

«ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ՍՊԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է
ԵՐԵՎԱՆ-ԲԵՅՐՈՒԹ
[illegible]
7 ՕՐՎԱ ՉԱՐՏԵՐ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ
3 աստղանի հյուրանոց, Լիբանանի տեսարժան վայրեր, [illegible]
14 ՕՐՎԱ ՉԱՐՏԵՐ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ
3 աստղանի հյուրանոց
Անհատական վիզաների և այլ փաստաթղթերի ձևակերպում
և հաստատում Մոսկվայում:

A STYLE

«ԷՐԵԲՈՒՆԻ» հյուրանոց, 2-րդ մասնաշենք, 327 սենյակ: Հեռ. 565575

ARMENIAN AIRLINES

AJAX

ԱՅԱՔՍ

«ԱՅԱՔՍ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ
ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԱՎԻԱՏՈՄՍԵՐ
ԱՊՀ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ
ՑԱՆԿԱՑԱԾ ԵՐԿԻՐ:
ԵՐԵՎԱՆ, ՊՈՒՇԿԻՆԻ Փ. 43, ՀԵՌ. (8852) 536944
ԵՐԵՎԱՆ, ԿՈՄԻՏԱՍԻ Փ. 49
ՀԵՌ. (8852) 234700, 230719 ՖԱՔՍ (8852) 282951

ԹՌԻՉՔՆԵՐ՝ ԲՈԼՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երևան 23, Արշակունյաց 2
Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 1804 Տպաքանակը՝ 7000 Ստորագրված է տպագրության՝ 23. 03. 1995 Գինը՝ 40 դրամ